«ԴԻԼԻ ՏՐՈՊԻԿ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Կատարող՝ «Քոնսեկոարդ» ՍՊԸ

Տնօրեն՝ _____Վ. Թևոսյան

«ՔՈՆՍԵԿՈԱՐԴ»
«CONSECOARD»
00111629

Երևան – 2023

Բովանդակություն

1. Ընդհանուր տեղեկատվություն 4

2. Իրավական կարգավորումները 6

3. Նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը և իրադրային սխեման 10

3.1. Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները 10

3.2 Կլիման 11

3.3. Օդային ավազան 15

3.4. Ջրային ռեսուրսներ 16

3.5. Հողային ռեսուրսներ 17

3.6. Կենսաբազմազանություն 17

3.6.1 Բուսական աշխարհ 17

3.6.2. Կենդանական աշխարհ 25

3.6.3. Բնության հատուկ պահպանվող տարածքներ 30

3.7 Սոցիալ տնտեսական պայմանները 34

4. Նախատեսվող գործունեության բնութագիրը 34

4.1. Գոյություն ունեցող վիճակը 34

4.2. Հիմնական ճարտարապետական լուծումները 35

4.3. Տեխնիկական ցուցանիշները 39

4.4. Նախապատրաստական աշխատանքներ 42

4.4. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում 43

5. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր 44

5.1. Ռիսկերի գնահատում 44

5.1.1. Օդի աղտոտում 45

5.1.2. Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն 45

5.2. Բնապահպանական միջոցառումների ծրագիր 47

5.2.1. Մթնոլորտային օդ 47

5.2.2 Ջրային ռեսուրսներ 48

5.2.3. Աղմուկի և թրթռումների ազդեցություն և մեղմացում 51

5.2.3. Հողային ռեսուրսներ 52
5.2.4 Կենսաբազմազանություն 53
5.2.5. Սոցիալական միջոցառումներ 54
5.2.6. Թափոնների և այլ նյութերի կառավարումը 54
5.2.7. Աշխատանքի անվտանգություն և առողջություն 55
5.3. Բազմաֆունկցիոնալ համալիրի շահագործման փուլ 56
5.4. Փոխհատուցում 56
6. Ռիսկերի նվազեցման և մոնիթորինգի պլան 57
Հավելված 1 59
Բնապահպանական կառավարման պլան 59
Մոնիթորինգի /մշտադիտարկումների/ պլան 63
Հավելված 1. Սեփականության վկայականի և կադաստրային քարտեզների պատճենները 65
Հավելված 2. Նախագծման թույլտվություն 68
Հավելված 3. Իրադրության հատակագիծ 73
Օգտագործված գրականության ցանկ 74

1. Ընդհանուր տեղեկատվություն

- **Նախատեսվող գործունեության անվանումը՝** *ՀՀ, Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցում*
- **Նպատակը՝** *ժամանակակից հարմարություններով հյուրանոցային քոթեջների համալիրի և զվարճանքի կենտրոնի կառուցում*
- **Ձեռնարկող և նախագծի պատվիրատու՝** *«Դիլի տրոպիկ» ՍՊԸ*
- **Հողամասի չափերը՝** *1.40939 հա*
- **Կառուցապատող՝** *«Դիլի տրոպիկ» ՍՊԸ*
- **Նախագծող՝** *կընտրվի մրցույթով*
- **Ձեռնարկողի հասցե՝** *ՀՀ, ք. Երևան, Դավիթ Անհաղթի 23*
- **Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ՝** *էլ փոստ՝ inants@forma.am, հեռախոս՝ 044708888*
- **Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը՝** *ՀՀ, Տավուշի մարզի Դիլիջան քաղաք, Արցախի փողոց թիվ 14*

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում «Դիլի տրոպիկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ):

Գործունեության իրականացման վայրը՝ ՀՀ, Տավուշի մարզ, Դիլիջան քաղաք, Արցախի փող. 14:

Հողամասը գտնվում է համայնքի բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի կազմում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) հոդված 14-ի կետ 6-ի համաձայն, նախատեսվող գործունեության նախագծային փաստաթուղթը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման և փորձաքննության:

Ելնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանից, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի, որի համար պահանջվում է նախնական գնահատման հայտի պատրաստում: Նախնական գնահատման հայտի

բովանդակությունը մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների համաձայն:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատման և վերլուծության արդյունքներն ամփոփվել են սույն նախնական գնահատման հայտում: Գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

Հայտում բնապահպանական ելակետային տվյալների հիման վրա առաջարկվել և ամփոփվել են հնարավոր ռիսկերը և շրջակա միջավայրի բաղադրիչների վրա ազդեցությունների կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Նախնական գնահատման հայտի մշակման համար օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- ձեռնարկողի կողմից տրամադրված տեղեկատվությունը, այդ թվում՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը և էսքիզային նախագիծը,
- շահագրգիռ կողմերի հետ բանակցություններն ու քննարկումները,
- նախատեսվող գործունեության ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- տարածքի վերաբերյալ վերլուծությունները, սխեմաները,
- շահագրգիռ կողմերի հետ բանակցություններն ու քննարկումները:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մշակում,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում,
- բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի և հանրային քննարկումների արդյունքների (ներառյալ՝ արձանագրություն, մասնակիցների ցանկ տեսաձայնագրություն)

ներկայացում շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Դիլիջան քաղաքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

2. Իրավական կարգավորումները

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Բնակելի համալիրի կառուցման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է առաջնորդվել բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Բնապահպանական և քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

ՀՀ Սահմանադրություն (**ընդունված** 06.12.2015**թ**.) **–** 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«***Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին***» ***ՀՀ*** օրենք (2014) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները:

Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«***Մթնոլորտային օդի պահպանության մասին***» ***ՀՀ օրենք*** (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

«***ՀՀ հողային օրենսգիրք***» *(2001)* - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«**ՀՀ ջրային օրենսգիրք**»

Ջրօգտագործման, ջրահեռացման, մակերեսային և ստորգետնյա ավազանների օգտագործման և պահպանության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով (ընդունված 04.06.2002) և Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքով:

ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը սահմանվել են ՀՀ կառավարության 27.01.2011 թ. N 75 - Ն որոշմամբ հաստատված “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմեր”-ով:

«***ՀՀ բուսական աշխարհի մասին օրենք***»

ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության

բնագավառում սահմանում է “Բուսական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 23.11.1999 թ.):

«***ՀՀ կենդանական աշխարհի մասին օրենք***»

ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը սահմանում է “Կենդանական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 03.04.2000 թ.):

«***ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք***»

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները կարգավորում է “Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին” ՀՀ օրենքը (ընդունված 27.11.2006 թ.):

«***Հողերի օգտագործման և պահպանման վերահսկողության մասին*» *ՀՀ օրենքը*** (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«***Թափոնների մասին*» *ՀՀ օրենք*** *(2004)* - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները:

«***Բնապահպանական վերահսկողության մասին*» *ՀՀ օրենք*** (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության

պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

- «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 72-Ն որոշում,
- «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 71-Ն որոշում,
- «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշում:

«***Քաղաքաշինության մասին***» ***ՀՀ օրենք*** (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղեկատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառկումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2018թ.) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

«Դիլիջան» ազգային պարկի և «Դիլիջան ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունները հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումը (Ընդունված 11.05.2022թ.) – նպատակն է «Դիլիջան» ազգային պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման, դիտանցի, ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումը:

3. Նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը և իրադրային սխեման

3.1. Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները

Դիլիջան քաղաքը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևելյան մասում, Աղստև գետի հովտում, ծովի մակերևույթից 1100-1510 մ բարձրության վրա, շրջապատված է Փոքր Կովկասի լեռնազանգվածներով:

Հյուսիս-արևելյան մասերում նրան հարում են Բազումի, արևմտյան և հարավ-արևմտյան կողմերից՝ Փամբակի, արևելքից՝ Մուրղուզի և հարավ-արևելքից՝ Արեգունի լեռները: Կիրճի լեռնային զանգվածները ծածկված են հարուստ անտառներով, որոնք վերջանալով լեռնային կատարներին, փոխարինվում են ալպյան մարգագետիններով:

Ֆիզիկաաշխարհագրական առումով մարզը գտնվում է Հայկական լեռնաշխարհի խոշոր լեռնագրական միավոր Փոքր Կովկասի լեռնահամակարգի 8 արտաքին շարի՝ Գուգարաց, Միափորի լեռնաշղթաների և նրանց լեռնաբազուկների (Ոսկեպար, Մթնասար, Իջևան, Պայտասար, Հախում, Կենաց, Տավուշ, Խնձորուտ) վրա: Դրանցից կենտրոնական դիրք են գրավում Գուգարաց լեռները, որոնք ջրբաժան են Կուրի Դեբեդ և Աղստև վտակների միջև:

Մարզի ռելիեֆի բնորոշ գծերից են ուղղաձիգ քարափային լանջերը, սեղանաձև լեռնակատարները (հատկապես Իջևանի տարածաշրջանում), 200-600 մ խորությամբ ձորերն ու կիրճերը, խիստ մասնատված մակերևույթը (տիրապետող են 12°-ից բարձր թեքության լանջերը): Տարածքի մեծ մասն ունի 800-1700 մ բարձրություն: 2000 մ և ավել բարձրութան տարածքները կազմում են մարզի ընդհանուր տարածքի ընդամենը 5-10%, իսկ ցածրադիր գոտին կազմում է մարզի տարածքի մոտ 15%-ը: Մարզի ցածրադիր կետը

(Դեբեդավան գյուղ) գտնվում է ծովի մակարդակից 379 մ բարձրության վրա, իսկ բարձրադիր կետը՝ Մուրղուզ լեռը՝ 2993 մ[1]:

3.2 **Կլիման**

Տավուշի մարզի կլիման բարեխառն է՝ չափավոր տաք ամառներով և մեղմ ձմեռներով, իսկ հյուսիսային և հյուսիս-արևելյան ցածրադիր գոտիներն աչքի են ընկնում չոր մերձարևադարձային կլիմայով: Մարզն ունի մեղմ կլիմա, թթվածնով հարուստ լեռնային մաքուր և բուժիչ օդ: Ընդ որում, լեռնագրական առանձնահատկություններով պայմանավորված, մարզի հարավային և հյուսիսային մասերը կլիմայական պայմանների առումով բավականին տարբերվում են: Հյուսիսային մասերում ձմեռը տաք է, սակավաձյուն, ամպամած օրերը քիչ:

Դիլիջան քաղաքին բնորոշ է մեղմ, լեռնա-անտառային չափավոր զով ամառը, արևաշատ տաք ձմեռը:

Համաձայն «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ 2022 թվականի 1-ին եռամսյակի տեղեկագրի՝

<u>Ամենաբարձր և ամենացածր ջերմաստիճանները</u> 2022 **<u>թվականի</u>** 1-**<u>ին եռամսյակում</u>**

Հունվար

Մարզ	**Ամենաբարձր ջերմաստիճանը**			**Ամենացածր ջերմաստիճանը**		
	Օդերևութաբանական կայանիտեղադրման վայրը և ինդեքսը	դիտման օրը(երը)	^{0}C	Օդերևութաբանական կայանի տեղադրման վայրը և ինդեքսը	դիտման օրը(երը)	^{0}C
Տավուշ	Իջևան (37711)	7	+18	Դիլիջան (37706)	17,18	-13

Փետրվար

Մարզ	**Ամենաբարձր ջերմաստիճանը**			**Ամենացածր ջերմաստիճանը**		
	Օդերևութաբանական կայանիտեղադրման վայրը և ինդեքսը	դիտման օրը(երը)	^{0}C	Օդերևութաբանական կայանի տեղադրման վայրը և ինդեքսը	դիտման օրը(երը)	^{0}C
Տավուշ	Իջևան (37711)	3	+18	Դիլիջան (37706)	12	-6

Ամսական տեղումների քանակը կազմել է՝ Տավուշում նորմայի 20,8-60,9%[2]:

[1] http://tavush.mtad.am/
[2] http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/eramsjak/I%20Eramsyak%202022(1).pdf

Ստորև բերված են տեղանքի կլիմայական պայմանները, որի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը՝ Դիլիջանի օդերևութաբանական կայանի դիտարկումները և համապատասխան կլիմայական ցուցանիշները:

Աղյուսակ 3.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C^0												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Դիլիջան	1256	-1.5	-1.0	2.2	7.7	12.0	15.2	18.3	18.1	14.3	9.3	4.3	0.4	8.3	-23	38

Աղյուսակ 3.2. Օդի հարաբերական խոնավությունը

	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
															հունվարին	օգոստոսին
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Դիլիջան	1256	63	65	70	72	78	79	77	78	79	78	73	70	74	51	60

Աղյուսակ 3.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ													Ձնածածկույթ		
	Ըստ ամիսների												Տարեկան	Տասնօրյա առավելագույնը, սմ	Օրերի թիվը	Ձրի առավելագույն քանակը ձյան մեջ, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Դիլիջան	22	30	45	65	106	103	66	51	46	47	36	22	639	53	57	103
	35	33	42	43	58	62	55	47	45	45	49	33	62			

Աղյուսակ 3.4. Քամու պարամետրերը

Միջին տարեկան **մեծագույն-տային ճնշում, (ՄՄՃ)**	**Ամիսներ**	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								**Անհանգիստ կանգիստերի** %	Միջին **անվտանգ արագությունը**	Միջին **տարեկան արագությունը**	Ուժեղ **քամիների** (5մ/վ օրերի **քանակը**	**Հաշվարկային արագությունը** մ/վ, **որը** հնարավոր է մեկ **ամսվա** "n" **տարիների ընթացքում**		
		Հյուսիսային (Հ)	Հյուսիս-**արևելյան** (ՀԱԼ)	**Արևելյան (Ա)**	**Հարավ-արևելյան** (ՀԱՀ)	**Հարավային (Հ)**	**Հարավ-արևմտյան** (ՀԱՀ)	**Արևմտյան (Ա)**	**Հյուսիս-արևմտյան** (ՀԱՀ)					20	50	100
875.6	Հունվար	3	19	2	3	22	32	15	4	28	2.1	1.8	4	20	22	24
		1,6	1.7	1.8	2.4	2.8	2.5	2,0	1.5							
	Ապրիլ	4	41	6	4	13	20	9	3	31	2.0					
		1.6	2.2	2.0	2.4	2.5	2.3	1.6	1.5							
	Հուլիս	5	63	10	2	2	7	8	3	42	1.7					
		1.9	2.5	2.4	1.4	1.4	1.3	1.1	1.4							
	Հոկ-տեմբեր	5	46	6	3	10	17	10	3	43	1.5					
		1.7	2.2	1.9	1.7	1.9	1.7	1.4	1.4							

Համաձայն «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ տվյալների օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 8,3 ^{o}C, բացարձակ նվազագույնը՝ - 23.0 ^{o}C, բացարձակ առավելագույնը՝ + 38.0 ^{o}C: Օդի հարաբերական խոնավությունը՝ 74%:

Տեղումների միջին քանակը կազմում է 639 մմ, ձյան ծածկույտի առավելագույն տասնօրյա հաստությունը՝ 53 սմ:

Քամու միջին տարեկան արագությունը հավասար է 1.8 մ/վրկ:

3.3. **Օդային ավազան**

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևությաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի օքսիդի, փոշու և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշման:

Մոնիթորինգի կենտրոնը Դիլիջան քաղաքում չունի դիտակայան, չի տեղադրում պասիվ նմուշառիչներ, հետևաբար մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ ՊՈԱԿ կողմից առաջարկած համապատասխան ձեռնարկ-ուղեցույցից[3]: Ըստ այդ ուղեցույցի 10-50 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.3 մգ/մ^3;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.05 մգ/մ^3;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.015 մգ/մ^3;
- Ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ^3:

---

[1] ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ. “ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները” ուղեցույց-ձեռնարկ: Երևան-2011

3.4. **Ջրային ռեսուրսներ**

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոօդերևությաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

ՀՀ կառավարության կողմից՝ «Կախված տեղանքի առանձնահատկություններից, յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75 Ն որոշում): ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 131 դիտակետ:

2021 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 16%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 36%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 26%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 22%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):

Տարածքի հիմնական ջրային զարկերակը Աղստև գետն է իր վտակներով (ամենամեծ վտակը համարվում է Գետիկը՝ 30 կմ): Աղստև գետի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 133 կմ: Բոլոր գետերի և գետակների ջրերը քաղցրահամ են: Մարզում կան նաև լճեր՝ Պարզ, Ժանգոտ, Գոշի լիճը: Մարզը հարուստ է նաև հանքային ջրերով, որոնցից առավել հայտնի է Բլդանի աղբյուրը՝ «Դիլիջան» անվամբ: Մարզում կան նաև ջրվեժներ: Խնձորուտի վրա է գտնվում 15 մ բարձրությունից թափվող Շառաչ ջրվեժը (Բայղուշի ձորում): Խաչաղբյուր գետի վրա՝ Ենոքավան գյուղից 3 կմ հեռավորության վրա է գտնվում Լաստիվեր ջրվեժը:

Մարզում են գտնվում թվով 5 ջրամբարներ՝ Ջողազի (45 մլն խմ), Հախումի (12 մլն խմ), Տավուշի (5 մլն խմ), Այգեձորի (4 մլն խմ) և Խաշթառակի (0.12 մլն խմ), որոնք հիմնականում օգտագործվում են ոռոգման նպատակով: Ջողազի ջրամբարը չի օգտագործվում սահմանային լինելու պատճառով, մնացած ջրամբարները ևս սահմանային են և մասամբ են օգտագործվում:

Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև հատվածում հունվար և մարտ ամիսներին գնահավել է «միջակ» (3-րդ դաս): Դիլիջան քաղաքից ներքև հատվածում

փետրվարին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «լավ» (2-րդ դաս): Իջևան քաղաքից վերև հատվածում փետրվարին գետի ջրի որկաը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «վատ» (5-րդ դաս): Իջևան քաղաքից ներքև հատվածում փետրվարին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «վատ» (5-րդ դաս)[4]:

Ներկայացվող գործունեության համար նախատեսվող տարածքի ուղիղ հեռավորությունը մինչև Աղստև գետի մոտակա հատվածը կազմում է 990 մ:

3.5. **Հողային ռեսուրսներ**

Համայնքի վարչական սահմաններում գերակշռում են անտառային հողեր: Անտառային գոտում գերակշռում են անտառային շականագույն հողերը, որոնք աչքի են ընկնում բարձր հզորությամբ և հորիզոնների լավ դիֆերենցվածությամբ: Ողջ անտառային գոտում հանդիպում են կարբոնատներով հարուստ, ապարների վրա զարգացած՝ տափաստանացված շականակագույն հողերը, մոզայիկ կառուցվածքով: Ենթալպյան գոտում զարգացած են լեռնամարգագետնային սևահողերը: Այնտեղ որտեղ տարածքը էրոզացված չէ , հողերը աչքի են ընկնում հզոր հումուսային շերտով՝ մինչև 40 սմ:

Գործունեության ենթակա տարածքների հողային տիպը անտառային մուգ դարչնագույն, չափավոր խոնավ հողերն են:

3.6. **Կենսաբազմազանություն**

3.6.1 **Բուսական աշխարհ**

Ծրագրի ազդեցության տարածքում բուսականության տիպերը բացահայտվել և դասակարգվել են դաշտային հետազոտությունների արդյունքում: Դաշտային հետազոտությունը կատարվել է երկրահետազոտության դասական եղանակով՝ երթուղային և կիսաստացիոնար, հետազոտվող տարածաշրջանը պայմանականորեն բաժանվել է ըստ հիմնական բիոտոպերի՝ հաշվի առնելու տեղանքի ռելիեֆը և լանդշաֆտը: Տրվել է բուսականության նկարագրությունը: Հետազոտության ընթացքում կատարվել են հանդիպող բուսատեսակների գրանցում և թվային լուսանկարում: Տեսակների որոշումը և անվանումների ճշգրտումը կատարվել է Հայաստանի ֆլորայի 11 հատորներով (Флора Армении, 1954-2010), բույսերի գիտական անվանումները ճշտվել են ըստ Ս. Չերեպանովի մեթոդական ձեռնարկի (Черепанов, 1995), ուսումնասիրվել են մի շարք լրացուցիչ աշխատություններ, մասնագիտական գրականություն: Հազվագյուտ և

[4] http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/eramsjak/I%20Eramsyak%202022(1).pdf

անհետացող տեսակների կարգավիճակը ճշտվել է ըստ Հայաստանի բույսերի և կենդանիների Կարմիր Գրքերի (2010):

Ուսումնասիրվող տարածքը գտվում է բուսական Կովկասյան պրովինցիայում: Բուսականության տիպերից այստեղ հանդիպում են անտառներ, մարգագետիններ, ինտրոզոնալ բուսականությունից հանդիպում է պետրոֆիլ և ջրաճահճային բուսականություն:

Անտառներ

Ստորին լեռնային գոտում (մինչև 1000 մ) լայնատերև անտառը ներկայացված է Բոխի արևելյանի (Carpinus orientalis) դոմինանտությամբ անտառներով: Հանդիպում են նաև Կաղնին վրացական (Quercus iberica), Հացենի սովորական (Fraxinus excelsior), Հացենի սրապտուղ (F. oxycarpa), Բոխի սովորական (Carpinus betulus), Թխկի վրացական (Acer ibericum), Թխկի դաշտային (Acer campestre), Թեղի մանրատերև (Ulmus minor) և այլն:

Տարածքում հանդիպում են նաև տերևային նոսրանտառներ և գիհուտներ: Դրանք տարածված են Աղստև գետի ձախակողմյան ափի հարավային թեքությունների վրա, որոնք հիմնականում աճում են էրոզիայի ենթարկված, քարքարոտ զառիթափ լանջերի վրա: Գիհուտներում հանդիպում է Գիհի բազմապտուղ (Juniperus policarpus), Գիհի սեղմված (J. depressa) և Գիհի երկարատերև (J. oblonga): Տերևավոր նոսրանտառներում հանդիպում է Փռշնին կովկասյան (Celtis caucasica), Նշենի Ֆենցլիի (Amigdalus fenzliana), Թխկի վրացական (Acer ibericum), Տանձենին կովկասյան (Pirus caucasica), Դժնիկ լուծողական (Rhamnus cathartica), ցախակեռաս կովկասյանը (Lonicera caucasica), մասրենու տեսակներ, ազնվամորին (Rubus idaeus), Թանթրվենի սևը (Sambucus nigra) և այլ:

Անտառ «Դիլիջան» ազգային պարկում

Հաճարենու անտառները հիմնականում տարածվում են 900-2000մ բարձրության վրա գտնվող հյուսիսային զառիթափերի վրա: Այստեղ անտառը ձևավորող հիմնական տեսակը Հաճարենին՝ արևելյան է (Fagus orientalis):

Արևելյան հաճարենին սովորաբար կազմում է միատարր պուրակներ: Որոշ տարածքներում հանդիպում են խառը տիպի պուրակներ Բոխու սովորականի (Carpinus betulus), Լորենին սրտաձևի (Tilia cordata), Կաղամախու (Populus tremula), Տանձենի կովկասյանի (Pyrus caucasica), Կեռասենի անտառայինի (Cerasus avium), Արոսենի սովորականի (Sorbus aucuparia), Թխկի բարձրլեռնայինի (Acer trautvetteri), Թխկի դաշտայինի (A.campestre) մասնակցությամբ:

Հայաստանի հյուսիսային շրջաններում Կաղնի վրացականի (Quercus iberica) խառը անտառները զբաղեցնում են 700-1100 (1200մ) բարձրությունները: 1200-1400մ-ից բարձր տարածքներում աճում է միայն արևելյան կաղնին (Quercus macranthera): Վերջինիս հիմնական ուղեկից տեսակներն են Բոխի սովորականը (Carpinus betulus), Բոխին արևելյանը (Carpinus orientalis), Թխկի վրացական (Acer ibericum), Թխկի դաշտային (Acer campestre), Հացենի սովորական (Fraxinus excelsior), Հացենի սրապտուղ (F. oxycarpa), Լորենի սրտաձև (Tilia cordata), Խնձորենի արևելյան (Malus orientalis), Տանձենին կովկասյան (Pyrus caucasica) և այլ տեսակներ: Մացառուտները, որտեղ ներկայացված են սովորական տխլենի (Corilus avellana), Ձկռենի սովորական (Mespilus

germanica), Գերիմաստի սովորականը (Viburnum lantana) տեսակները, հանդիպում են հարավային լանջերին և բացատներում:

Սոճի կոխի (Pinus kochiana =Pinus sylvestris ssp.hamata) ծառատեսակը հանդիպում է խառը անտառներում, երբեմն մեծ խմբերով կազմում է սոճուտ:

Ենթալպյան անտառների մասին, որոնք բավականին լավ են ներկայացված Հյուսիսային Հայաստանի որոշ շրջաններում՝ ծովի մակարդակից 1800-2200մբարձրության վրա, բնութագրվում են կարճ (5-10մ) միայնակ կանգնած ծառերով, որոնք տիպ անհավասար ցրված են մարգագետինների ֆոնին:

Կենի հատապտղայինը (Taxus baccata) բավական հաճախ է հանդիպում ազգային պարկի տարածքում՝ սովորաբար առանձնյակների տեսքով: Աղավնավանք գյուղի մոտ պահպանվում է կենու բավական մեծ պուրակը: Այստեղ աճում են 300-400 տարեկան, մինչև 25 մ բարձրության և 75-80 սմ բնի տրամագծով կենու բազմաթիվ ծառեր:

Շիբլյակ

Ազգային պարկի ցածրադիր վայրերում (մինչև 1100 մ) բավական փոքր տարածքների վրա բուսականության այս տիպում գերակշռում են Ցաքի փշոտը (Paliurus spina-christi): Հանդիպում են նաև Ծորենի սովորական (Berberis vulgaris), Չմենի ամբողջաեզր (Cotoneaster integerrimus), Մասրենի շան (Rosa canina), Փռշնի կովկասյան (Celtis caucasica), Դժնիկ քաղցր (Rhamnus pallasii), հասմիկ թփուտային (Jasminum fruticans) և այլն:

Մարգագետիններ

Մարգագետինների մեծ մասն օգտագործվում է որպես արոտավայր:

Ենթալպյան մարգագետինները տարածված են 2000-2100մ-ից բարձր: Հիմնական համակեցությունները տարախոտային, տարախոտա-դաշտավլուկազգի են: Հացազգիներից հանդիպում է Կարճքտնուկ փետրաձև (Brachipodium pinnatum), Այծակն գլանաձև (Aegilops cylindrica), Գարի մանուշակագույն (Hordeum violaceum), Խմրախոտ բուրավետ (Antoxantum odoratum), Ոսկեվարսիկ դեղնավուն (Trisetum flavescens), Բարակոտնուկ խոշորածաղիկ (Koeleria macrantha),

Դաշտավլուկ մարգագետային (Poa pratensis), Ոզնախոտ կծկավոր (Dactylis glomerata) և այլն:

Բարդածաղկավորներից՝ Տերեփուկ դեղնամանուշակագույն (Centaurea cheiranthifolia), Տերեփուկ ուռատերև (Centaurea salicifolia), Հալևորուկ ամբողջատերև, (Senecio integrifolius), Անթեմ տրիումֆետի (Anthemis triumfetii), Հազարատերևուկ Բիբերշտեյնի (Achillea biebersteinii), Կակաչազգիներից՝ Կակաչ թռչող (Papaver fugax), Գնարբուկազգիներից է Գնարբուկ խոշորաբաժակ (Primula macrocalyx), Ակքանազգիներից՝ Քոսքսուկ կովկասյան (Scabiosa caucasica), Ձիվան հսկայական (Cephalaria gigantea), Գորտնուկազգիներից՝ գորտնուկ լեռնային (Ranunculus oreophilus), Ընձախոտ արևելյան (Aconitum orientale), Բակլազգիներից՝ Կորնգան սրանավակ (Onobrychis oxitropoides), Տափոլոռ մարգագետնային (Lathyrus pratensis), Երեքնուկ նման (Trifolium ambiguum), Երեքնուկ դաշտային (Trifolium campestre) Շուշանազգիներից՝ Շուշան հայկական (Lilium armenum), Զանգակազգիներից՝ զանգակ խմբված (Campanula glomerata), Շրթնածաղկազգիներից՝ Խուլ եղինջ ցողունագիրկ (Lamium amplexicaule), Խուլեղինջ սպիտակ (Lamium album), Աբեղախոտ բալանզայի (Stachys balansea), Թթվիճ խոշորածաղիկ (Betonica macrantha), Գողտրիկազգիներից՝ Մոմախոտ փոքր (Cerinthe minor), Կաղամբազգիներից՝ Ձագախոտ գեղեցիկ (Erysimum pulchellum), Վառվռուկ բաժակային (Alyssum alyssoides), Ասպլենազգիներից՝ Ասպլեն հյուսիսային (A. septentrionale) այլն:

Պեկրոֆիլ բուսականությունը ներկայացված է մի շարք ընտանիքներով: Թանձրատերևազգիներից հանդիպում է թանթռնիկ կովկասյան (Sedum caucasicum), Թանթռնիկ հակադրատերև (Sedum oppositifolium), Քարբեկազգիներից հանդիպում է Քարբեկ եռմատնանի (Saxifraga tridactylites), Քարբեկ գիհատերև (Saxifraga juniperifolia), Բարդածաղկավորներից՝ Խինձ կոշտ (Scorzonera rigida), Հալևորուկ ճարճրուկատերև (Senecio erucifolius) և այլն:

Ջրա-ճահճային բուսականություն: Սովորաբար այս ջրասեր համակեցություններում հանդիպում են ուռենի սպիտակ (Salix alba), բարդի սև (Populus nigra): Խոտաբույսերից հանդիպում են Կնյուն բաժանված (Juncus effusus), Բոշխ կարճամազ (Carex hirta), Բոշխ փքված (Carex rostrata), Գորտնուկ դաշտային (Ranunculus arvensis) և այլն:

Աղստև գետը

ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ

ՀՀ Տավուշի մարզում հանդիպող 50 բուսատեսակ ընդգրկված են Հայաստանի բույսերի Կարմիր գրքում: «Դիլիջան ազգային պարկի» տարածքում աճում են 29 կարմիրգրքային բուսատեսակ: Դրանցից են՝ Պսեֆելուս դեբեդի (Psephellus debedicus) (EN), Պոպուլիկ Մարշալի (Corydalis marschalliana) (EN), Վարդապետիկ դժգույն (Muscari pallens) (EN), Արքայածաղիկ բլրակային (Fritillaria collina) (EN), Էպիպոգիում անտերև (Epipogium aphyllum) (EN), Բանպոտ Բրաունի (Polystichum braunii) (EN), Հողմածաղիկ գորտնուկային (Anemone ranunculoides) (EN), Թեզիում փռված (Thesium procumbens) (EN), Եզնակող Կոզո-Պոլյանսկու(Bupleurum koso-poljanskyi) (VU), Գնարբուկ սքանչելի (Primula amoena) (VU), Շիկատակ (Atropa bella-donna) (VU), Կենի հատապտղային (Taxus baccata) (VU), Շյուղախոտ անտառային (Festuca drymeja) (VU) և այլն:

Հայաստանի էնդեմներ են Եզնակող Կոզո-Պոլյանսկու (Bupleurum koso-poljanskyi), Պսեֆելուս դեբեդի (Psephellus debedicus),Պսեֆելուս փամբակի (Psephellus pambakensis), Խլածաղիկ Օլգայի (Scrophularia olgae), Կտավախոտ զանգեզուրի (Linaria zangezura), Մասրենի Սոսնովսկու (Rosa sosnovskyana), Շնդեղ Գոհարի (Colchicum goharae), Տանձենի ֆյոդոռովի (Pyrus fedorovii Kut.), Ճայկտուց Սոսնովսկու (Erodium sosnowskianum Fed.) և այլն:

«Դիլիջան» ազգային պարկում հանդիպող բուսատեսակներ

Թխկի սաշտային

Սոճի կոխի

Բոխի արևելյան

Կենի հատապտղային

Սգնի հովհարրատերև

Ձկեռենի սովորական

Բոխի սովորական

Տանձենի կովկասյան

Հաճարենի արևելյան

Խուլեղինջ սպիտակ

Շուշան հայկական

Ծիծեռնախոտ մեծ

Սաղավարտուկ արևելյան

Հարկ է նշել, որ գործունեության տարածքը 2 կողմից շրջապատված է «Դիլիջան» ազգային պարկի տարածքով, իսկ հարևանությամբ կան նաև այլ բնակելի

կառուցապատման հողամասեր: (Հողամասի իրադրային հատակագիծը ներկայացված է Հավելված բաժնում):

3.6.2. **Կենդանական աշխարհ**

Կենդանական աշխարհի ուսումնասիրությունը կատարվել է բուսական աշխարհին զուգահեռ:

Թռչող կենդանիների թռիչքի ձևը (տեղաշարժվելու բնույթը), առանձին կենդանիների արձակած ձայները կամ կենսագործունեության արդյունքները կարող են տեղեկություններ հաղորդել այդ կենդանիների ներկայության մասին: Թռչունները սովորաբար դիտարկվում են հեռադիտակով և տեղում համեմատվում թռչունների դաշտային ուղեցույցի տվյալների հետ (Մարտին Ս: Ադամյան, Դանիել Քլեմ Կրտսեր ,,Հայաստանի թռչունները,, դաշտային ուղեցույց, ISBN: 0-9657429-5-4): Քանի որ կենդանիները տարածության մեջ տեղաշարժվում են և միշտ չէ հնարավոր տեսնել դրանց, կատարվել են նաև հարցումներ տեղաբնակների շրջանում:

Անողնաշարավորներ

Դիլիջան ազգային պարկի տարածքից հայտնի է բզեզների (Coleoptera) 512 տեսակ, որոնք պատկանում են 44 ընտանիքների 296 ցեղերին:

Ցերեկային թիթեռները պարկում ներկայացված են 7 ընտանիքների 68 ցեղերին պատկանող 122 տեսակներով: Մրջյուններից (Formicidae) պարկում հայտնաբերվել է 10 ցեղերի պատկանող 29 տեսակ:

Ողնաշարավորներ

<u>Ձկներ</u>

«Դիլիջան» ազգային պարկով հոսող Աղստև գետում հայտնաբերվել են կարմրախայտը (Salmo trutta fario), Սևանի կողակը (Capoeta sevangi), արևելյան տառեխիկը (Alburnoides eichwaldii), Քուռի կողակը (Capoeta capoeta capoeta), քուռի բեղլուն (Barbus lacerta cyri), կովկասյան թեփուղը (Squalius cephalus orientalis) և այլն: Հաղարծին գետում հանդիպող հիմնական ձկնատեսակն է կարմրախայտը (Salmo trutta fario): Բլդան գետում հանդիպում են կարմրախայտ (Salmo trutta fario), Քուռի բեղլու (Barbus lacerta cyri), արևելյան տառեխիկ (Alburnoides eichwaldii) և, երբեմն, կողակ (Capoeta sp.): Գետիկ գետում հանդիպում են կարմրախայտ (Salmo trutta fario), Քուռի բեղլու (Barbus lacerta cyri), արևելյան տառեխիկ (Alburnoides eichwaldii) և կողակ (Capoeta

sp.): Պարզ լիճը արհեստականորեն բնակեցրած է արծաթափայլ կարասով (Carassius auratus gibelio) և կարպով (Cyprinus carpio):

Երկկենցաղներ և սողուններ

Ազգային պարկի տարածքում հանդիպում են 4 տեսակի երկկենցաղներ՝ լճագորտը (Pelophilax ridibundus), փոքրասիական գորտը (Rana macrocnemis), կանաչ դոդոշը (Bufo viridis), Շելկովնիկովի սովորական ծառագորտը (Hyla arborea schelkownikowi):

Աղստև գետի առափնյա ժայռերի վրա տարածված են ժայռային մողեսների երկու երկսեռ տեսակներ՝ Ռադդեի (Darevskia raddei) և քուռի (D. portschinskii) մողեսները: Հանդիպում են նաև Դալլի մողեսը (Darevskia dahl), Ռոստոմբեկովի մողեսը (D. rostombekovi), մարգագետնային մողեսը (D. praticola): Անտառային գոտու բացատներում ոչ մեծ քանակությամբ հանդիպում են ճարպիկ մողեսը (Lacerta agilis) և շերտավոր մողեսը (L. strigata): Տարբեր ջրաճահճային էկոհամակարգերում գրանցվել է ջրային լորտուն (Natrix tesselata): Կան ճահճային կրիա (Emys orbicularis), դեղնափորիկ (Pseudopus apodus), որդանման կույրօձ (Typhlops vermicularis), սովորական լորտու (Natrix natrix):

Թռչուններ

«Դիլիջան» ազգային պարկում տարվա տարբեր սեզոններին հանդիպում է թռչունների մոտ 190 տեսակ, որոնցից մոտ 130-ը այստեղ բնադրում են:

Ազգային պարկում բնադրող թռչունների մեծամասնությունը ներկայացված է անտառային տեսակներով: Այստեղ լայն տարածված են հոբալը (Columba oenas), անտառային աղավնին (Columba palumbus), փայտփորների վեց տեսակ՝ վիզգցուկը (Jynx torquilla), կանաչ (Picus viridis), սև (Dryocopus martius), խայտաբղետ (Dendrocopos major), միջին (D. medius) և փոքր (D. minor) փայտփորները, եղնջաթռչնակը (Troglodytes troglodytes), անտառային նրբագեղիկը (Prunella modularis), արշալուսիկը (Erithacus rubecula), սովորական կարմրատուտը (Phoenicurus phoenicurus), սոսնձակեռնեխը (Turdus viscivorus), սև (T. merula) և երգող (T. philomelos) կեռնեխները, սևագլուխ (Sylvia atricapilla) և այգու (S. borin) շահրիկները, դեղնափոր (Phylloscopus trochiloides) և ծնկլտան (Ph. collybita) գեղգեղիկները, փոքր (Ficedula parva) և կիսասպիտակավիզ (F. semitorquata) ճանճորսները, երկարագի (Aegithalos caudatus), սև (Parus ater), երկնագույն (P. caeruleus) և մեծ (P. major) երաշտահավերը, սովորական սիտեղը (Sitta europaea), ծվծվիկը (Certhia familiaris) և անտառային կաչաղակը (Garrulus glandarius): Սերինոսներից լայն տարածված են ամուրիկը (Fringilla coelebs), կանաչ սերինոսը (Carduelis chloris), սովորական խածկտիկը (Pyrrhula pyrrhula) և հատբեկիչը (Coccothraustes coccothraustes), ականջավոր բուն (Asio otus) ձայները: Ցերեկային գիշատիչ թռչուններից այստեղ բնադրում են օձակեր արծիվը (Circaetus gallicus), կրետակերը (Pernis apivorus),

ցախաքլորաորսը (Accipiter gentilis), լորաճուռակը (A. nisus), մեծ ճուռակը (Buteo buteo), փոքր ենթաարծիվը (Aquila pomarina) և գաճաճ արծիվը (Hieraaetus pennatus): Անտառամերձ բացատներում և մացառուտներում հանդիպում են այծկիթը (Caprimulgus europaeus), անտառակտցարը (Scolopax rusticola), սովորական տատրակը (Streptopelia turtur), անտառային արտույտը (Lullula arborea), անտառային ձիաթռչնակը (Anthus trivialis), սևագլուխ չքչքանը (Saxicola torquatus), ճուռականման (Sylvia nisoria), մորու (S. curruca) և մոխրագույն (S. communis) շահրիկները, կովկասյան գեղգեղիկը (Phylloscopus sindianus), ժուլանը (Lanius collurio), ոսպնուկը (Carpodacus erythrinus), կանեփնուկը (Carduelis cannabina) և սևագլուխ դրախտապանը (Emberiza melanocephala):

Աղստև և Գետիկ գետերի հովիտների բաց ջրային տարածքներում և արհեստական լճակների ափերին հանդիպում են կարմրաոտ (Tringa tetanus), սևուկ (T. ochropus) և սպիտակավիզ (Actitis hypoleucos) կտցարները, երկնագույն ալկիոնը (Alcedo atthis), լեռնային խաղտտնիկը (Motacilla cinerea) և ջրաճնճղուկը (Cinclus cinclus): Գետերի ափամերձ թփուտներում և ճահճուտներում բնադրում են հարավային սոխակը (Luscinia megarhynchos), լայնապոչ եղեգնաթռչնակը (Cettia cetti), այստեղի խոնավ մարգագետինները գրավում են դեղին խաղտտնիկին (Motacilla flava), շերտագլուխ (Acrocephalus schoenobaenus) և ճահճային (A. palustris) եղեգնաթռչնակներին և սովորական ճռիկահավին (Locustella naevia), ինչպես նաև այստեղ կեր հայթհայթող մեղվակերին (Merops apiaster) և առափնյա ծիծեռնակին (Riparia riparia): Առափնյա անտառին բնորոշ տեսակներից են արտույտաբազեն (Falco subbuteo), մոխրագույն ճանճորսը (Muscicapa striata), ճոճահավը (Remiz pendulinus), պիրոլը (Oriolus oriolus) և սևաճակատ շամփրուկը (Lanius minor):

Պարկում ամենուրեք հանդիպում են քարքարոտ ելքեր, ժայռեր իսկ ջրբաժանների կատարների երկայնքով՝ նաև ժայռաբեկորների թափվածքների դաշտեր: Ցածրադիր գոտում այս կենսամիջավայրին են բնորոշ գիշանգղը (Neophron percnopterus), բվեճը (Bubo bubo), ներկարարը (Coracias garrulus), թխակապույտ աղավնին (Columba livia), ժայռային (Ptyonoprogne rupestris) և քաղաքային (Delichon urbicum) ծիծեռնակները, սևախայտ քարաթռչնակը (Oenanthe hispanica), կապույտ քարակեռնեխը (Monticola solitarius), ժայռային փոքր սիտեղը (Sitta neumayer), ժայռային ճնճղուկը (Petronia petronia), այգու (Emberiza hortulana) և լեռնային (E. cia) դրախտապանները: Բարձր լեռնային գոտու ժայռերին և մերձակա լեռնային տափաստաններին և մարգագետիններին բնորոշ են կովկասյան մարեհավը (Tetrao mlokosiewiczi), վայրի հնդկահավը կամ ուլարը (Tetraogallus caspius), սովորական կկուն (Cuculus canorus) և այլնա; Լեռնային մարգագետինների այլ տարածված տեսակներից են մոխրագույն կաքավը (Perdix perdix), մարգահավը (Crex crex), դաշտային արտույտը (Alauda arvensis), լեռնային ձիաթռչնակը (Anthus spinoletta) և մարգագետնային չքչքանը: Ջրային

թռչուններից չուի ժամանակ այստեղ հանդիպում են փոքր ջրցուլը (Ixobrychus minutus), սպիտակ փոքր (Egretta garzetta), մոխրագույն (Ardea cinerea) և շիկակարմիր (A. purpurea) տառեղները, սև (Ciconia nigra) և սպիտակ (C. ciconia) արագիլները, փոքր քարադրը (Charadrius dubius), սովորական կիվիվը (Vanellus vanellus), մորակտցարը (Gallinago gallinago), ծխագույն կտցարը (Tringa nebularia), սովորական (Larus ridibundus) և հայկական (L. armenicus) որորները, սպիտակաայտ (Chlidonias hybrida) և սպիտակաթև (Ch. leucopterus) ջրածիծառները, դեղնագլուխ խաղտտնիկը (Motacilla citreola): Ձմռան ամիսներին ազգային պարկի ցածրադիր գոտում հանդիպում են հյուսիսից այցելող ձմեռող տեսակներ, ինչպիսիք են՝ փոքր սուզակը (Tachybaptus ruficollis), դաշտային մկնաճուռակը (Circus cyaneus), թավշաոտ ճուռակը (Buteo lagopus), աղավնաբազեն (Falco columbarius), սինակեռնեխը (Turdus pilaris), դեղնագլուխ արքայիկը (Regulus regulus), մոխրագույն շամփրուկը (Lanius excubitor), սովորական սերինոսը (Fringilla montifringilla), զնվասարեկը (Carduelis spinus), սովորական (Emberiza citrinella) և եղեգնուտի (E. schoeniclus) դրախտապանները:

Կաթնասուններ

Ազգային պարկի տարածքից ներկայումս հայտնի են 55 տեսակի կաթնասուններ:

Այստեղ հանդիպում են սովորական դաշտամուկը (Microtus arvalis), թփութային դաշտամուկը (Microtus majori), որը Կովկասյան էնդեմիկ տեսակ է, անտառային քնամոլը (Dryomys nitedula), պոլչոկը (Glis glis), դեղնակուրծք մուկը (Apodemus ponticus), որը կովկասյան էնդեմիկ տեսակ է, փոքր անտառային մուկը (Apodemus uralensis), մակեդոնական մուկը (Mus macedonicus), պարսկական կամ կովկասյան սկյուռը (Sciurus anomalus), անտառակատուն (Felis silvestris silvestris), լուսանը (Lynx lynx) և գորշ արջը (Ursus arctos): Սովորական են այծյամը (Capreolus capreolus) և վայրի խոզը (Sus scrofa): Անտառաբնակ չղջիկներն են լայնականջ ծալքաշուրթ չղջիկը (Tadarida teniotis), փոքր իրիկնաչղջիկը (Nyctalus leisleri), շիկակարմիր իրիկնաչղջիկը (Nyctalus noctula), եվրոպական լայնականջ չղջիկը (Barbastella barbastellus), անտառային կամ Նատուզիուսի փոքրաչղջիկը (Pipistrellus nathusii), գորշ ականջեղ չղջիկը (Plecotus auritus): Քարքարոտ վայրերում կարող են գրանցվել սրականջ գիշերաչղջիկը (Myotis blythii) և եռագույն գիշերաչղջիկը (Myotis emarginatus): Մարգագետիններում և բացատներում լայնորեն տարածված են եվրոպական նապաստակը (Lepus europaeus), ձնային դաշտամուկը (Chionomys nivalis), սպիտակափոր սպիտակատամը (Crocidura leucodon = C. persica), փոքր սպիտակատամը (Crocidura suaveolens), աղվեսը (Vulpes vulpes), գորշուկը (Meles canescens), քարակզաքիսը (Martes foina) և աքիսը (Mustela nivalis):

Ջրամերձ տարածքներում գրանցվում են ջրային դաշտամուկը (Arvicola amphibius = A. terrestris), Շելկովնիկովի կուտորան (Neomys teres = N. schelkovnikovi), որը Կովկասյան էնդեմիկ տեսակ է, բեղավոր գիշերաչղջիկը (Myotis mystacinus):

Ամենուրեք տարածված են Ռադդեի գորշատամը (Sorex raddei), Սատունինի գորշատամը (Sorex satunini = S. caucasica stavropolica), Վոլնուխինի գորշատամը (Sorex volnuchini), որոնք Կովկասյան էնդեմիկ տեսակներ են, սպիտակափոր ոզնին (Erinaceus concolor), փոքր խլուրդը Talpa levantis) և գայլը (Canis lupus):

Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ

ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված են Դիլիջան ազգային պարկի տարածքում հանդիպող Թեփուկաթևավորներից Ապոլոնը (Parnassius apollo kashtshenkoi Sheljuzko, VU Alcde), Ավետյանի երկրաչափ թիթեռը (Cidaria avetianae Wardikian, EN B Ia+B2a), Ալկոն կապտաթիթեռը (Maculinae alconmontocola Staudinger, VU B Ia+B2a):

Տարածքում կան կարմիրգրքային միջատներից Կաղնու մեծ երկարաբեղիկը (Cerambyx cerdo acuminatus Motsch., VU B Ia+ B 2a), Ալպյան ռոզալիան (Rosalia alpina L., EN B Ia+B2a):

Աղստև գետում հանդիպող Սևանի կողակը (Capoeta sevangi) (VU) գրացված է Կարմիր գրքում, Հայաստանի էնդեմիկ է:

Սողուններից այս տարածքում հանդիպում են Darevskia ցեղի ժայռային մողեսներից Դալլի մողեսը (Darevskia dahl(EN B1a+2a), Ռոստոմբեկովի մողեսը (D. rostombekovi(EN B 2ab ii, iii) և մարգագետնային մողեսը (D. praticola) (VU B1ab (iii)+2a) գրանցված են ՀՀ կենդանիների Կարմիր գրքում:

Ազգային պարկում հանդիպող թռչունների 36 տեսակ գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում, որոնցից 11-ը ընդգրկված են նաև Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում: Կա Կովկասյան մեկ էնդեմիկ տեսակ – կովկասյան մարեհավ (Tetrao mlokosiewiczi) և Հայկական բարձրավանդակի էնդեմիկ մեկ տեսակ՝ հայկական որոր (Larus armenicus):

ՀՀ Կարմիր գրքում նշված են կովկասյան ազնվացեղ եղջերուն (Cervus elaphus maral CR D), գորշ արջը (Ursus arctos VU B2ab (iii, iv)), անտառակատուն (Felis silvestris VU B1 ab(iii, iv)), Շելկովնիկովի կուտորան (Neomys schelkovnikovi (EN B1a+2a), ջրասամույրը (Lutra lutra EN D), ասիական լայնականջ չղջիկը (Barbastella leucomelas VU B1ab (iii)), ծալքաշուրթ լայնականջ չղջիկը (Tadarida teniotis DD), սովորական երկարաթև չղջիկը (Miniopterus schreibersi VU B1ab (iii)+2ab(iii)), գորշ ականջեղ չղջիկը (Plecotus auritus VU B1a):

Անդրկովկասի էնդեմ է անդրկովկասյան կուրամկնիկը (Ellobius lutescens): Շելկովնիկովի կուտորան (Neomys schelkovnikovi) (էնդեմ), թփուտային դաշտամուկը

(Microtus majori), դեղնակուրծք մուկը (Apodemus flavicollis), Ռադդեի (Sorex raddei), կովկասյան կամ Սատունինի (Sorex satunini) և Վոլնուխինի (Sorexs volnuchini) գորշատամները, Դաղստանի դաշտամուկը (Microtus daghestanicus) կովկասյան էնդեմներ են:

Գործունեության ենթակա տարածքում կենդանական աշխարհի բնադրավայրեր, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ չեն հայտնաբերվել:

3.6.3. **Բնության հատուկ պահպանվող տարածքներ**

Մարզում ստեղծվել են բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ), այդ թվում՝ մեկ ազգային պարկ, 5 արգելավայր և 2 դենդրոպարկ (Իջևանի դենդրոպարկ, Բերդի սորաններ):

«Դիլիջան» ազգային պարկ

Ստեղծվել է՝ 2002 թ. (1958թ. ստեղծված Դիլիջան պետական արգելոցի հիման վրա)

Տարածքը՝ 33765 հա

Վայրը՝ Տավուշի մարզ

Բարձրությունը՝ 1070-2400 մ ծովի մակարդակից բարձր[5]:

Ազգային պարկի նպատակն է ապահովել լանդշաֆտների և կենսաբազմազանության, պատմամշակութային ժառանգության պահպանումը, ինչպես նաև համահունչ տնտեսական զարգացումը: Մանավորապես՝ հաճարենու և կաղնու մեզոֆիլ անտառների, կենու եզակի պուրակի, կովկասյան մայրեհավի, գորշ արջի և այլ տեսակների, ինչպես նաև բնական և պատմաճարտարապետական հուշարձանների պահպանություն:

Պարկի տարածքում են գտնվում Պարզ և Գոշ (տզրկա) լճերը, Աղավնավանքի կենու պուրակը, հանքային ջրի աղբյուրներ:

Պարկի տարածքը հարուստ է նաև պատմամշակութային հուշարձաններով: Այստեղ առկա են պատմության և մշակույթի հուշարձաններ՝ քաղաքատեղիներ, գյուղատեղիներ, կամուրջներ, եկեղեցիներ, վանական համալիրներ, մատուռներ:

[5] https://protectedareas.am/

Այստեղ է գտնվում միջնադարյան Հայաստանի հոգևոր և մշակութային կենտրոններ հանդիսացող Հաղարծին վանքը (11-13-րդ դարեր) և Գոշավանքը (Նոր Գետիկի վանք 12-13-րդ դարեր):

Պարկի տարածքում է գտնվում Մաթոսավանքը (10-13-րդ դարեր), Ջուխտակ վանքը (12- 13-րդ դարեր), Աղավնավանքի ս. Աստվածածին անապատ եկեղեցին (11-13-րդ դարեր):



Պետական արգելավայրեր

Տավուշի մարզում են գտնվում Իջևանի, Արջատխլենու, Գանձաքարի-Վերին Աղդանի, Ձիկատարի, Ախնաբադի կենու պուրակ պետական արգելավայրերը: Սակայն նշված արգելավայրերը գտնվում են ծրագրի ազդման գոտուց հեռու և իրենց վրա չեն կրելու որևէ բացասական ազդեցություն:

Բնության հուշարձաններ

Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Դիլիջան քաղաքում և չի առնչվում բնության հուշարձանների և պատմամշակութային հուշարձանների հետ: Այդուամենայնիվ ստորև ներկայացվում է ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված Տավուշի մարզում բնության հուշարձանների ցանկը:

Աղյուսակ 3.5. Տավուշի մարզի հուրշարձանների ցանկը

N	***Հուշարձանի անվանումը***	***Բնութագրերը***	***Տեսակը***	***Իրավական հիմքը***
	Կովասարի փոխակերպարային թերթաքարեր	Բերդ քաղաքից մոտ 20 կմ հարավ՝ Վարագաջուր (Հախում) գետի վերին հոսանքի ավազանում, Վարագաջրի ձախ վտակ Կառնուտի և Վարագաջուր գետի աջ չոր վտակի հատման կետում, Կառնուտ վտակի հոսանքն ի վեր գնացող գրունտային ավտոճանապարհի աջ կողմում	Երկրաբանական հուշարձան	05.08.2014թ. N 220-Ն
	«Կալաքար» լեռ	Ծաղկավան գյուղից մոտ 6 կմ հարավ-արևմուտք, Վարագաջուր (Հախում) գետի ձախափնյա անտառապատ լանջին՝ գրունտային ճանապարհի աջ կողմում, 12-13 դարերի Շահմուրադ (Չխմուրադի, կամ Գետակիցք վանքի) վանքային համալիրից մոտ 150 մ դեպի հյուսիս-արևմուտք	Երկրաբանական հուշարձան	05.08.2014թ. N 220-Ն
	«Չինչինի անկյունային աններդաշնակություն»	Չինչին գյուղի հվ-արլ. եզրին	Երկրաբանական հուշարձան	05.08.2014թ. N 220-Ն
	«Չինչինի սանդղափուլ քարափներ»	Չինչին գյուղից ուղիղ գծով 1.5կմ հարավ-արևելք, Հախում գետի աջակողմյան լանջին	Երկրաբանական հուշարձան	05.08.2014թ. N 220-Ն
	«Պլագիոգրանիտ-պորֆիրային դայք»	Բերդ ավանից 6.5 կմ հվ-արմ, Տավուշ գետի ձախ ափին, գետից 5 մ բարձրության վրա	Երկրաբանական հուշարձան	05.08.2014թ. N 220-Ն
	«Քվարցային պլագիոպորֆիրների սյունաձև անջատումներ»	Հովք գյուղից 900 մ դեպի հս-ալ., Աղստև գետի ձախ ափին, Երևան-Իջևան ավտոմայրուղու ձախ կողմում	Երկրաբանական հուշարձան	05.08.2014թ. N 220-Ն
	«Փայտասար» քարանձավների համալիր	Կողբ գյուղից 4 կմ հարավ	Երկրաբանական հուշարձան	05.08.2014թ. N 220-Ն

N	Հուշարձանի անվանումը	Բնութագրերը	Տեսակը	Իրավական հիմքը
	«Օձաքար» լեռ	Պառավաքար գյուղից 3 կմ (ուղիղ գծով 1 կմ) հյուսիս-արևմուտք, Պառավաքար-Վազաշեն գրունտային ավտոճանապարհի աջ կողմում՝ Պառավաքար լեռնագագաթից 1,5 կմ հարավ-արևմուտք, Կաղնուտաթում լեռնագագաթից մոտ 3 կմ հյուսիս-արևելք	Երկրաբանական հուշարձան	05.08.2014թ. N 220-Ն
	«Զորականի սոսի»	Տավուշի մարզ, Զորական գյուղական համայնքի վարչական սահմանում	Կենսաբանական հուշարձան	05.08.2014թ. N 220-Ն
	«Վարդան Մամիկոնյանի կաղնի»	Տավուշի մարզ, Ակնաղբյուր գյուղական համայնք	Կենսաբանական հուշարձան	05.08.2014թ. N 220-Ն
	«Սարի գյուղի սոսի»	Տավուշի մարզ, Սարիգյուղ գյուղական համայնք, Երևան-Նոյեմբերյան ճանապարհից աջ	Կենսաբանական հուշարձան	05.08.2014թ. N 220-Ն
	«Գետահովտի մամռապատ ժայռ»	Տավուշի մարզ, Գետահովիտ գյուղից մոտ 1.8 կմ հյուսիս-արևմուտք՝ Սառնաջուր գետի ձախ ափին	Կենսաբանական հուշարձան	05.08.2014թ. N 220-Ն
	«Զիկատարի տանձուտ»	Տավուշի մարզ, «Զիկատար» ուսումնական կենտրոնից հարավ-արևմուտք, 600 մ. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Զիկատարի անտառպետություն	Կենսաբանական հուշարձան	05.08.2014թ. N 220-Ն
	«Ոսկեպարի կենի»	Տավուշի մարզ, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Ջուջևանի անտառպետություն, Ոսկեպար համայնքից 6 կմ հարավ-արևմուտք	Կենսաբանական հուշարձան	05.08.2014թ. N 220-Ն
	«Ջոնջոլկուտ»	Տավուշի մարզ, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Դովեղի անտառպետություն, արեկամավան համայնքից 1 կմ հարավ-արևմուտք	Կենսաբանական հուշարձան	05.08.2014թ. N 220-Ն

3.7 **Սոցիալ տնտեսական պայմանները**

Ներկայացվող տարածքը գտնվում է ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում:

Դիլիջան քաղաք

Բնակչություն՝ 17.0 հազ. մարդ

Դիլիջան խոշորացած համայնքը ընդգրկում է հետևյալ բնակավայրերը՝ Դիլիջան քաղաք, Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Հովք, Աղավնավանք և Խաչարձան գյուղեր:

Քաղաքը բարեկարգ ավտոմայրուղով կապված է մայրաքաղաք Երևանին (96 կմ), Վանաձորի և Իջևանի հետ (35-40 կմ): 1986 թվականից երկաթուղով կապված է Հանրապետության երկաթուղային ցանցին (Դիլիջան-Երևան հատվածը 144 կմ):

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առանձնանում է սննդամթերքի և խմիչքների արտադրությունը: Լայն ճանաչում է ստացել «Դիլիջան Ֆրոլովա» հանքային ջուրը:

2014թ. սեպտեմբերից գործում է «Դիլիջան ինտերնեյշնլ սքուլ օֆ Արմենիա» միջազգային դպրոցը, իսկ 2013թ. սեպտեմբերից՝ «Այբ» դպրոցների ընտանիքին պատկանող Դիլիջանի կենտրոնական դպրոցը:

Քաղաքի ճարտարապետական տեսքին առանձնակի վայելչություն է տալիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասնաճյուղն իր օժանդակ կառույցներով:

Ներկայում մեծ աշխատանքներ են տարվում բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգնման և միջազգային զբոսաշրջության զարգացման ոլորտում քաղաքի երբեմնի ունեցած համբավի վերականգնման ուղղությամբ:

4. Նախատեսվող գործունեության բնութագիրը

4.1. **Գոյություն ունեցող վիճակը**

Հայցվող տարածքը գտնվում է «Դիլիջան» ազգային պարկի հարևանությամբ: Անմիջապես տարածքը ամայի է, այստեղ չկան շինություններ, ծառեր, թփեր, ենթակառուցվածքներ: Առանձին հատվածներում առկա են խոտածածկ տարածքներ:

Տարածքը կապված է մոտակա բնակելի թաղամասի հետ գրունտային ճանապարհով:

4.2. **Հիմնական ճարտարապետական լուծումները**

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցումը իրականացվելու է 2 փուլով: Առաջին փուլում նախատեսվում է կառուցել 7 հիմնական մասնաշենքեր և 3-4 հարկանի ավտոկայանատեղի:

1-6 մասնաշենքերը նախատեսված են լինել որպես հյունացողային քոթեջներ, որոնք կառուցվելու են տարբեր աշխարհամասերի ոճային առանձնահատկություններով: 7-րդ մասնաշենքը իրենից ներկայացնում է կապող ֆունկցիոնալ միջանցք և դեկորատիվ տրոպիկական միջավայրով ընդհանուր տարածք:

2-րդ փուլում նախատեսվում է կառուցել ժամանցի կենտրոն և լողավազան:

Մասնաշենքերը հարմարեցված են ռելիեֆին: Նախատեսվում է հարմարացնել բնական լանդշաֆտը կառույցի հետ:

Շինությունների ջեռուցումը նախատեսվում է իրականացնել չիլերների, օդափոխանակիչների և կաթսաների միջոցով:

Ձմեռային այգու տարածքի համար նախատեսված է բնական հակածխային օդափոխություն: Ծխի հեռացումը կատարվում է շենքի վերևի մասով, ֆրամոգաների ավտոմատ բացման միջոցով, ծխահեռացման կոմպենսացիան կատարվում է սենքի ներքևի մասում բացվածքի ավտոմատ բացվելու միջոցով:

Բնական ծխահեռացման հաշվարկը կկատարվի համաձայն մեթոդական ցուցումների СП7.13130 МЧС, ՌՖ

Ձմեռային այգու տարածքի համար նախատեսված է մեխանիկական մատակարարման և արտանետվող օդափոխության համակարգ, օդի հարաբերակցությունը որոշվում է հաշվարկով՝ հաշվի առնելով խոնավության արտանետումները, ջերմային օգուտները և մարդկանց թիվը:

Համալիրի ողջ տարածքում ապահովված է ջրային հրդեհաշիջման համակարգ, հրշեջ հիդրանտների քանակը տրամադրվում է՝ ելնելով սենյակի ցանկացած կետի մարման պայմաններից երկու տարբեր ԱՀ-ից: Ջրի սպառումը մեկ ԱՀ-ի համար՝ ըստ հիդրավլիկ հաշվարկի, բայց ոչ պակաս, քան 2,5 լ/վ:

Համալիրի կառուցման տևողությունը, ներառյալ երկրորդ փուլը, կարող է կազմել 2 տարի: Անմիջապես հողային և շինարարական աշխատանքների առավելագոյն տրողությունը կարող է կազմել 16 ամիս:

Ստորև բերված են տարածքի իրադրային սխեման, գլխավոր հատակագծի նախագիծը և մոդելավորված պատկերը:



Նկար 1. Իրադրային սխեմա

Նկար 2. Գլխավոր հատակագիծ

Նկար 3. Համալիրի պատկերը

4.3. **Տեխնիկական ցուցանիշները**

Հողատարածքի ընդհանուր մակերեսը՝ 14093.9 մ²:
Կանաչապատման մակերես՝ 2818.9 մ² (20%)
Կառուցապատման ընդհանուր մակերեսը՝ 11275.0 մ²

Առաջին փուլում.

- Աֆրիկյան ոճով հյուրանոցային քոթեջներ՝ 13 հատ, յուրաքանչյուրի մակերեսը՝ 125 մ²,
- Ասիական ոճով հյուրանոցային քոթեջներ՝ 14 հատ, յուրաքանչյուրի մակերեսը՝ 106 մ²,
- Ամերիկյան ոճով հյուրանոցային քոթեջներ՝ 15 հատ, յուրաքանչյուրի մակերեսը՝ 91 մ²,
- Ընդամենը քոթեջների մակերեսը՝ 4474 մ²:

2 ***փուլ լողավազան եվ ռեստորանային համալիր***.

- ռեստորան
- լողավազան
- Ավտոկայանատեղի՝ ընդհանուր տեղերի քանակը 80 հատ,
- Ընդամենը՝ 6801.0 մ²:

Ստորև բերված են համալիրի հատակագծերը կանաչապատման մակերեսով և տեխնիկական ցուցանիշներով:

Նկար 4. Հատակագիծ տեխնիկական ցուցանիշներով

Նկար 5. Հատակագիծ կանաչապատման սխեմայով

4.4. **Նախապատրաստական աշխատանքներ**

Շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝

- ժամանակավոր ցանկապատման իրականացում,
- պահեստային և մոնտաժային հարթակների կարգավորում,
- ժամանակավոր տնակների տեղադրում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- ջրի պահեստային բաքի տեղադրում,
- կեղտաջրերի հավաքման ժամանակավոր տարողության տեղադրում
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում:

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Նախագծի շինարարության կազմակերպումը պետք է մշակվի ՀՀՇՆ 3. 01.01.2008-ի դրույթներով: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 մաս՝ նախապատրաստական և հիմնական: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները՝

- շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով
- ժամանակավոր էլեկտրամատակարարում և ջրամատակարարում
- շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- շին.հրապարակի գիշերային լուսավորվածություն:

Հիմքերը տեղադրելուց առաջ հիմնատակը պետք է ընդունվի երկրաբանի կողմից հաստատված ակտով (բաց փոսորակի ընդունման ակտ):

Ապրանքային բետոնը շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով շին. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շին. հրապարակը կազմակերպելիս անհրաժեշտ է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակումը հետևում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Շինհրապարակում կարևորվում են հետևյալ միջոցառումների կատարումը.

- Շինարարության ընթացքում անհրաժեշտ մնացած նյութատեխնիկական ռեսուրսների մատակարարումը կիրականացվի լիցենզավորված կազմակերպություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից:
- Համապատասխան մակնիշի բետոնախառնուրդի առաքումը դեպի հրապարակ կիրականացվի բետոնախառնիչիներով՝ կապալառուի հետ պայմանագրային հիմունքներով և համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովելով աշխատանքների կատարման անընդհատությունը: Այսպիսով՝ կբացառվի հրապարակում բետոնաշաղախային խառնուրդի պատրաստման գործընթացը:
- Հրապարակում սորուն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) ժամանակավոր կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, շինարարական կոնստրուկցիաները (ամրաններ և այլն) հողային շերտից բարձր և ծածկերի տակ՝ բացառելու համար արտաքին միջավայրի ազդեցությունները՝ հաշվի առնելով վերջիններիս վարքի կոռոզիոն առանձնահատկությունները, իսկ մնացած շինարարական նյութերի պահապանումը հրապարակում կիրականացվի նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան:

Շինարարութան ընթացքում անհրաժեշտ հիմնական մեքենաների և մեխանիզմների ցանկը տեսակներով և մակնիշներով կներկայացվի աշխատանքային նախագծում:

4.4. **Նյութերի և բնառեսուրսների օգտագործում**

Դիլիջան քաղաքում բազմաֆունկցիոնալ համալիրի և զվարճանքի կենտրոնի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, խիչ, գեօցանցեր, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական

կոնստուկցիաներ և այլն: Նյութերի ցանկը և հստակ քանակները ներկայացվում են աշխատանքային նախագծում:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակների տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար: Ջրօգտագործման ծավալներու ներկայացված են սույն հայտի 5.1.2. ենթաբաժնում:

5. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր

5.1. Ռիսկերի գնահատում

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա կդրսևորվեն որոշակի բացասական ազդեցություններ, սակայն վերջիններս կկրեն ժամանակավոր բնույթ: Ազդեցությունները իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև ու պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքներով:

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ՝

- շինարարական տեխնիկայի շահագործմամբ՝ դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ,
- բետոնային աշխատանքների իրականացմամբ,
- հիմքերի փորման ընթացքում՝ հողային զանգվածների և շինաղբի տեղափոխման հետ կապված,
- շինհրապարակների տեղադրման և վառելիքաքսայուղերի պահեստավորման հետ կապված,
- շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում աղմուկի մակարդակի ավելացմամբ:

Համալիրի շահագործման ընթացքում ազդեցությունը պայմանավորված կլինի հանգստացողների և հաճախորդների սպասակմամբ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

5.1.1. **Օդի աղտոտում**

Նախատեսվող գործունեության հետ կապված աշխատանքներն ուղեկցվում են օդի աղտոտմամբ՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք առաջանում են համալիրի կառուցման հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի աշխատանքի դեպքում: Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները տեղայնացված են, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Քանի որ շին հրապարակը բաց տարածք է, ապա նույնիսկ քամու միջին արագության պայմաններում արտանետումները ենթակա են արագ ցրման:

Դիզելային վառելիքի այրմամբ պայմանավորված արտանետումներ առաջանում են միայն շինարարության ընթացքում շինհրապարակի ներսում, տեխնիկական միջոցների աշխատանքի ընթացքում՝ շարժական աղբյուրներից: Այս արտանետումները ևս կրում են ժամանակավոր բնույթ: Քանի որ շինարարական թափոններ և շինանյութեր տեղափոխող մեքենաների համար կսահմանվեն երթեր /մեքենաները դուրս կգան սահմանված ժամանակացույցով/, ապա շինհրապարակից դուրս օդի աղտոտվածության ավելացում չի լինի: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականցվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:

Անբարենպաստ եղամակային պայմանների դեպքում արտանետումների քանակները լրացուցիչ կնվազեցվեն հայտում նախատեսված միջոցառումների իրականացմամբ /ջրցան կամ տեխնիկական միջոցների կարգաբերում և այլն/:

5.1.2. **Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն**

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, հանված հողային զանգվածի խոնավացման, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Անհրաժեշտ ջրաքանակը բանվորական կազմի խմելու-կենցաղային նպատակների համար կգնվի առևտրային կազմակերպություններից:

Տեխնիկական նպատակների համար ջուր կբերվի Դիլիջան համայնքի հետ պայմանագրային հիմունքներով քաղաքապետարանի կողմից նշված ցանցից:

Վերը ներկայացված ջրօգտագործումը, որը չի իրականացվում մակերևութային կամ խորքային բնական աղբյուրներից, չի պահանջում ջրօգտագործման թույլտվություն:

Մինչև շինարարության մեկնարկը կկառուցվի ժամանակավոր կեղտաջրերի հավաքման հոր, որը հետագայում կփոխարինվի հիմնական կեղտաջրերի հավաքման կայանով: Շինարարությունը իրականացնող անձնակազմը օգտվելու է ժամանակավոր տնակներից:

Համալիրի նախագծային փաստաթղթերում կատարվել է լրացում՝ նախատեսվում է տեղադրել կենսաբանական մաքրման կայան, որի նկարագրությունը և տեխնիկական ցուցանիշները բերված են 5.2.2. բաժնում:

Խմելու կենցաղային ջրապահանջ

Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$W= (n \times N + n_1 \times N_1) T$

Որտեղ՝ n - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է – 6 մարդ

N - ջրածախսի նորման՝ - 0.016 մ^3/օր/մարդ,

N_1 - բանվորների թիվն է - 22 մարդ,

N_1 - ջրածախսի նորման բանվորների համար՝ - 0.025 մ^3/օր/մարդ

T – շինարարության աշխատանքային օրերի առավելագույն թիվը՝ 360 օր:

Այսպիսով՝ $W= (6 \times 0.016 + 22 \times 0.025) \times 360 = 232.6$ մ^3/տարի, միջին օրականը՝ 0.646 մ^3/օր:

Արտադրական նպատակներով ջրի ծախսը պայմանավորված փոշեառաջացման օջախների ջրմամբ:

Ջրցան

Այդ ծախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$V_1 = S \times K \times T \times K_1$,

Որտեղ՝ S – շինհրապարակի թրջվող մակերեսն է – 600 մ^2,

K - ջրցանման նորման – 0.0015մ^3/1մ^2

T – ջրցանի /տաք և չոր եղանակի/ օրերը - 360 օր

K_1 – ջրցանի օրական քանակը - 2

Այսպիսով՝ $V_1 = 600 \times 0.0015 \times 360 \times 2 = 648$ մ^3/տարի

Միջին օրականը կազմում է 1.8 մ^3

Գրունտի և բերրի հողի խոնավացում՝

V_2 = W x K, որտեղ՝

W – հանվող գրունտի և հողաբուսաշերտի ծավալը, 22540 մ^3,

K – խոնավացման նորմը, 8 լ/մ^3 (0.008 մ^3/մ^3)

V_2 = 22540 x 0.008 մ^3/մ^3 = 180 մ^3:

Ընդամենը՝ 232.6 + 648 + 180 = 1060.6 մ^3 կամ 2.95 մ^3/օր:

5.2. **Բնապահպանական միջոցառումների ծրագիր**

Ինչպես նշվելը վեր՝ շրջակա տարածքների և գործունեության ազդեցության ենթակա մոտակա հանրային միջավայրի վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով *(ԲԿՊ)* նախատեսված՝ սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել՝ շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությանների կանխման կամ մեղմացման միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

5.2.1. **Մթնոլորտային օդ**

Օդային աազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում,
- շինարարական աշխատանքների /փոշեառաջացման աշխատանքներ/ ընթացքում իրականացնել ջրցան,

- խուսափել շինանյութերի ժամանակավոր կուտակումներից և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ կանխարգելելու համար փոշու տարածումը,
- գրունտի և սորուն նյութերի տեղափոխումն իրականացնել ծածկված թափքերով բեռնատարներով և երթևեկության համար սահմանել երթեր,
- խուսափել անորակ վառելիքի օգտագործումից:

5.2.2 **Ջրային ռեսուրսներ**

Ջրային ռեսուրսների պահպանության հիմնական միջոցառումը՝ կենցաղային կեղտաջրերի և հեղեղաջրերի մաքրման համակարգի նեղադրումն է:

Ջրահեռացման համակարգեր

ա. Կենցաղային կոյուղու հեռացման համակարգ

Հաշվի առնելով, որ շինության տարածքում գոյություն չունեն քաղաքային ջրահեռացման համակարգեր, նախատեսվում է շինության տարածքում կառուցել հեղեղատար և կենցաղային կոյուղու մաքրման կայաններ:

Կենցաղային կոյուղին մաքրման կայանում անցնում է մի քանի աստիճան մաքրում և մաքրված ջուրը կուտակվում է համապատասխան պահուստային բաքում: Մաքրման հանգույցը նախատեսվում է իրականացնել երկու 25000 լիտր ծավալ ունեցող մաքրման կայաններով:

Կայաններում կոյուղու մաքրման փուլերն են՝

1. Մեխանիկական մաքրման փուլ
2. Մուտքի և համասեռման փուլ
3. Աերացիա
4. Նստեցման փուլ
5. Ավազային ֆիլտր
6. Վարակազերծում
7. Բիո ֆիլտրացման փուլ

Պահուստային բաքի ծավալը 40000 լիտր է, կուտակված ջուրը օգտագործվում է տարածքի ոռոգման կարիքների համար (շինության յուրահատկությունը հաշվի առնելով, ոռոգման համակարգը աշխատում է ամբողջ տարվա ընթացքում):

Կայանի տեխնիկական ցուցանիշներն են.

- առավելագույն հզորությունը՝ 50 մ³/օր, այս քանակը կարող է ապահովել 250 մարդ/օր պահանջարկը, ըստ նախագծի հանգստացողների առավելագույն թիվը կարող է լինել 200, կեղտաջրերի ծավալը՝ 40 մ³/օր, աշխատողների թիվը՝ 28 մարդ, կեղտաջրերի ծավալը՝ 1.8 մ3/օր: Այսպիսով ընդամենը առավելագույն արտահոսքը կարող է կազմել՝ 41.8 մ³/օր, իսկ մաքրման կայանի հազորությունը՝ 50 մ³/օր:
- մոդուլների քանակը՝ 2 հատ,
- չափերը՝ 12.0մ x 3.0մ x 6.0մ
- Կայանքի քաշը՝ 24 տ,
- Էլ.հզորությունը՝ 55 կՎտ:

Մաքրման կայանի արդյունավետության անձնագրային ցուցանիշները բերված են աղյուսակ 5.1-ում, որում նաև բերված են ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75 - Ն որոշման Հավելված N 4-ի նորմերը Աղստև գետի Դիլիջանի հատվածի համար, որն ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ 2021 թ. ամփոփագրի դասվում է «3» կատեգորիայի շարքին: Քանի որ ՀՀ-ում չկան ոռոգման համար սահմանված նորմատիվներ, համեմատությունը կատարվել է Աղստև գետի համար, որի ջուրը Դիլիջանում օգտագործվում է ոռոգման նպատակներով:

Աղյուսակ 5.1. Մաքրման կայանի արդյունավետության համեմատական ցուցանիշները

Աղտոտող նյութի կամ ցուցանիշի անվանումը	Չափման միավոր	Մաքրման կայանի նորմատիվը	Աղստև գետի նորմատիվը
pH	-	6.5 – 8.5	6.5 - 8.5
ԹԿՊ	մգO_2/l	3 - 5	9
ԹՔՊ-Cr	մգO_2/l	15 - 25	40
Ընդհանուր հանքայնացում	մգ/լ	-	1000
Կախված մասնիկներ	մգ/լ	0.5 – 5	25.5
Սինթետիկ մակերևութային ակտիվ նյութեր	մգ/լ	0.1	չի նորմա-վորվում

Ինչպես երևում է աղյուսակից, մաքրված կեղտաջրերի աղտոտվածությունը անհամեմատ ավելի ցածր է, քան տվյալ հատվածում Աղստև գետի ջրերի համար սահմանված նորմերն են:

AC DESIGN

բ. Հեղեղատար կոյուղու հեռացման համակարգ

Հեղեղատար ջրերը նույնպես անցնում են մաքրում և օգտագործվում համալիրի ջրի սպառման համակարգերում՝ մասնավորապես զուգարանակոնքրի սնուցում: Մաքրման համակարգը կազմված է պարզարանից և հավաքման բաքից:

5.2.3. **Աղմուկի և թրթռումների ազդեցություն և մեղմացում**

Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի գերազանցումներ ՀՀ-ում սահմանված նորմերից չի կանխատեսվում, քանի որ շինարարական աշխատանքներում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում: Բացի այդ հիմնական աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին, այն է՝ ժամը 9:00-ից 18:00:

Շինարարական գործողությունների ընթացքում առաջացող հնարավոր թրթռումների դեպքում ազդեցություններ հարևան ազդակիրների վրա չեն գնահատվում՝ հաշվի առնելով ժայռային հողերի և համապատասպան սարքավորման օգտագործման անհրաժեշտության բացակայությունը:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին,
- խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում խլացուցիչների տեղադրում,
- բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը:

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը՝ հաշվի առնելով առկա ազդակիր շինությունների (բնակելի և հասարակական շենքեր) հեռավորությունը շինտարածքից:

Աղմուկի մակարդակների կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են բնապահպանական կառավարման պլանի աղյուսակում:

5.2.3. **Հողային ռեսուրսներ**

Հողային ռեսուրսների պահպանության հիմնական միջոցառումը՝ բերրի հողաշերտի պահպանումն է: Հողի բերրի շերտի կտրումը, տեղափոխումը, պահպանումը և օգտագործումն պետք է իրականացնել առաջնորդվելով՝ Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 02 նոյեմբերի 2017 թվականի N 1404-Ն որոշմամբ հաստատված կարգով:

Նախատեսվում է հողամասի երկարությամբ կազմակերպել բերրի հողի պահեստ՝ ծածկի տակ և շրջանցող առուներով:

Ըստ նախնական հաշվարկների հանվող բերրի հողի ծավալը կկազմի 750 մ^3, հանվող գրունտը՝ 21790 մ^3, ընդամենը՝ 22540 մ^3: Գրունտը ամբողջությամբ կօգտագործվի ետլիցքի և տարածքի հարթեցման համար:

Բերրի հողը ամբողջությամբ օգտագործվելու է տարածքի բարեկարգման և կանաչապատման նպատակով: Որպեսզի նվազագույնի հասցվի բերրի հողի հատկությունների կորուստը՝ պահպանման ընթացքում, յուրաքանչյուր տեղամասի աշխատանքների ավարտից այդ մասի բերրի հողը, առանց սպասելու ընդհանուր աշխատանքների ավարտին, անմիջապես կփռվի և կխնամվի:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով անհրաժեշտ է՝

- քսայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման դեպքում վերջիններս պահել հատուկ անթափանց, փակ տարաներում՝ հետագայում որպես երկրորդային նյութ վերաօգտագործել շինարարական այլ աշխատանքներում, կամ հանձնել վերամշակող կազմակերպություններին,
- մեքենա-սարքավորումների լիզքավորումը, քսայուղերի փոխումը կամ նմանատիպ այլ գործողություններ իրականացնել մասնագիտացված կենտրոններում, որպեսզի հնարավորինս բացառվի շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և հնարավոր ռիսկերը,

- աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել, վերականգնել և մաքրել՝ առաջացած թափոնները տեղափոխելով Դիլիջանի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր,
- շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, որտեղ ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով:

Շինարարական և կենցաղային աղբով շրջակա տարածքների աղտոտումը բացառելու նպատակով նախատեսվում է՝

- շինհրապարակում բացառել թափոնների ժամանակավոր կուտակումները,
- թափոնները ժամանակին տեղափոխել հատկացված վայրեր՝ համայնքի ղեկավարի կամ աղբավայրը շահագործողների հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն,
- վտանգավոր թափոնների հանձնում ընկերությունների, որոնք ունեն վտանգավոր նյութերի վնասազերծման կամ տեղակայման արտոնագիր,
- բացառել բետոնի պատրաստումը շինհրապարակում և այն շինհրապարակ բերել պատրաստի վիճակում,
- շինանյութերի ձեռք բերում միայն լիցենզավորված մատակարարներից:

5.2.4 **Կենսաբազմազանություն**

Անմիջապես գործունեության համար նախատեսված տարածքում բնական բուսածածկ չկա, սակայն ինչպես նշվել է նախորդ բաժիններում համալիրը կառուցվելու է «Դիլիջան ազգային պարկ»-ի հարևանությամբ, որտեղ առկա են անտառային տարածքներ: Այդ իսկ պատճառով նախատեսված են կենսաբազմազանության պահպանության համար հետևյալ միջոցառումները՝

- շինարարական հրապարակում բեռնատար մեքենաների ժամանակավոր կայանման համար տարածքների տրամադրում,
- շինարարական մեքենա-սարքավորումների տեղաշարժի կազմակերպում շարասյուներով և սահմանափակ արագությամբ (≤30 կմ/ժ), ինչպես նաև մեքենաների իրար հաջորդող տեղաշարժի կազմակերպում՝ առնվազն 30 րոպե պարբերականությամբ,
- տրանսպորտային միջոցները ճանապարհներից դուրս արգելել,
- շինհրապարակում խուսափում՝ շինարարական ու կենցաղային աղբի այրումից և կուտակումից,

- բոլոր աշխատողները պետք է հատուկ հրահանգավորվեն բնական միջավայրերում աշխատելու կանոնների մասին:

5.2.5. **Սոցիալական միջոցառումներ**

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է՝

- թույլ չտալ շինարարական աշխատանքների կատարումը սահմանված ժամերից դուրս,
- շինհրապարակը ցանկապատել և վերահսկել՝ կանխելու համար չլիազորված անձանց մուտքը շինհրապարակ,
- վտանգավոր տեղամասերում տեղադրել նախազգուշացնող նշաններ,
- որակավորված աշխատակիցների միջոցով իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ
- շինարարների համար՝ անվտանգության աուդիտների, առաջին օգնության և անվտանգության դասընթացների պարբերաբար կազմակերպելում և իրականացում:

5.2.6. **Թափոնների և այլ նյութերի կառավարումը**

Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շինարարական աշխատանքների ընթացքում կառաջանա շինարարական աղբ և կենցաղային թափոններ:

Շինարարական աշխատանքների ժամանակ կառուցապատվող տարածքում հողային աշխատանքներից առաջացող հանույթը ամբողջությամբ կօգտագործվի հետլիցքի համար:

Շինարարական աղբը (հիմքերի փորման ժամանակ առաջացած մնացորդային գրունտի և շինաղբի ծավալները ժամանակավոր կուտակվելու է շինհրապարակում կանոնավոր կույտերի տեսքով՝ հատուկ հատկացված տեղերում, այնուհետև պարբերաբար տեղափոխվելու և տեղադրվելու են համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

Գործունեության ընթացքում կենցաղային աղբը կհավաքվի կենցաղային աղբի համար նախատեսված աղբամաններում և կանոնավոր կերպով կհեռացվի շինարարական հրապարակից՝ համապատասխանաբար՝ համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ.-ի N430-Ն հրամանի հավելվածի՝ շինարարության ընթացքում առաջացող թափոնները ներկայացված են՝

- շինարարական աղբով, (քանի որ ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ. №430-Ն հրամանով հաստատված «Ըստ վտանգավորության

դասակարգված թափոնների ցանկ»-ում և ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006թ. N342-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկ»-ում ուղղակի շինարարական աղբ դասակարգում չկա, առավել մոտ է՝ 9120060101004 ծածկագրի՝ /վտանգավորության 4-րդ դաս/ անվանումը ըստ հավելվածի՝ շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ տեսակը):

Հաշվի առնելով տարածքի զգայուն էկոհամակարգը, շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի բոլոր սպասարկման աշխատանքները, քսայուղերով և վառելիքով լիցքավորումը կիրկանացվի մասնագիտացված կայաններում, ինչը թույլ կտա բացառել վտանգավոր թափոնների առաջացումը:

Մինչև շինարարական աշխատանքների սկիզբը շինարարության կապալառուն գրավոր դիմելու է Դիլիջանի համայնքապետարան աղբի և թափոնների տեղադրման վայրի հարցով և աղբի և թափոնների տեղափոխությունները և տեղադրումը կիրականացվի համաձայն համայնքապետարանի կողմից համաձայնեցված ժամանակացույցի:

5.2.7. **Աշխատանքի անվտանգություն և առողջություն**

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները ներառում են՝

- աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար նշանակել պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:
- Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար՝ ցանկապատում, պահակակետեր, ցուցանակներ, արգելող պաստառներ և այլ:
- Ապահովել շինհրապարակում աշխատողների համար հանգստի պայմաններ և կենցաղային պայմաններ /լվացարան, զուգարան/:
- Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում:
- Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժօգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում:
- Անձնակազմը պետք է ապահովվի համապատասխան արտահագուստով և անհատական պաշտպանական միջոցներով:
- Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ:

Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել գրանցամատյանում:

- Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)
- Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը շխատանքներն իրականացնել այնպես, որ նվազագույնի հասցվի ազդեցությունը հարևան բնակիչների և շրջակա տարածքների վրա:
- Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ:

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները շինարարության փուլում կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված միջոցառումների:

5.3. **Բազմաֆունկցիոնալ համալիրի շահագործման փուլ**

Բազմաֆունկցիոնալ համալիրի շահագործման փուլում արգելվելու է հանգստացողների տեղաշարժը ազգային պարկի տարածքում: Համալիրի տնօրինությունը մշակելու է հանգստացողների և հաճախորդների համար հրահանգ, որում մանրամասն կերպով կներկայացվեն ազգային պարկի մասին տեղեկատվություն և դրա պահպանությանը ուղղված արգելքները:

Շահագործման փուլի համար նախատեսվում է կառուցել մաքրման կենսաբանական կայան, որի աշխատանքնը մշտապես վերահսկվելու է համալիրը սպասարկող անձնակազմի կողմից:

5.4. **Փոխհատուցում**

Ինչպես նախորդ ենթակետերում նշվել է, բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վերականգնել բոլոր այն տեղամասերի նախնական վիճակը, որոնք կենթարկվեն գործունեության ազդեցության:

Շինհրապարակի համար մշակվելու է տարածքների վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլան: Կանաչապատման աշխատանքներն իրականացվելու են նախագծման առաջադրանքի պահանջներին և

տարածքի համար հետագայում մշակվող տարածքի կանաչապատման սխեմային համապատասխան: Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը՝ նվազագույնը 20 տոկոս /ներառյալ բնական լանդշաֆտը/ նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել:

Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար օգտագործվելու են տարածաշրջանի բուսականությանը համապատասխան ծառեր և բուսատեսակներ, որը քննարկվելու է «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ աշխատակիցների հետ, որի համար կա նախնական համաձայնություն:

Ոռոգումն իրականացվելու է կառուցվող ոռոգման ցանցի միջոցով, որը կմիանա տեղի մակերևութային ջրերի հավաքման տարողություններին:

Այն տեղամասերում, որոնք ենթակա են գործունեության ազդեցության, նախատեսվում է իրականացնել արտաքին զննում և ետնախագծային մոնիթորինգ՝ նույնպես արտաքին զննման եղանակով:

Բոլոր բնապահպանական միջոցառումները կներառվեն շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

6. **Ռիսկերի նվազեցման և մոնիթորինգի պլան**

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպել իրականացվող աշխատանքների մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիթորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին: Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի կողմից կիրականացվի

կանոնավոր մոնիթորինգ, որի շրջանակներում կիրականացվեն մշտադիտարկումների միջոցառումներ և ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (մեկ անգամ մեկ ամսվա ընթացքում):

ԲԿՊ-ն, որը ներկայացված է հավելված 1-ում, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է պայմանագրային փաստաթղթերին:

Հավելված 1

Բնապահպանական կառավարման պլան

Ծրագրի Գործողու-թյունները	Հնարավոր Ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող Միջոցառումները	Մեղմացնող միջոցառման պատասխա-նատուն	Արտաքին վերահսկո-ղություն
Նախագծային փաստաթղթերի պատրաստում	Բացասական ազդեցություններ՝ շինարարության փուլում, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում,	- Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև պայմանագրային փաստաթղթերում: - Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունների ձեռք բերում	Շինարարության կապալառու	Դիլիջանի համայնքապետարան
Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ Այլ շինարարական աշխատանքներ	Շին տեխնիկայի շահագործումից փոշու և վնասակար նյութերի արտանետումներ;	- Օդի աղտոտման և փոշու կառավարում Օդի որակի չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքների դեպքում: - Անհրաժեշտ է իրականացնել շին հրապարակի պարբերական ջրցանում փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով; - Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և հնարավորինս ծածկել կուտակված նյութերը փոշու տարածումից խուսափելու համար; - Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով; - Աշխատանքների ընթացքում կառաջանան շինարարական թափոններ և աղբ, որոնք անմիջապես կտեղափոխվեն համայնքապետարանի կողմից հատկացված վայր - Շրջակա տարածքները (անտառներ, բացատներ, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով - Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի	Շինարարության կապալառու	Դիլիջանի համայնքապետարան Բնապահպա-նության և ընդերքի տեսչական մարմին

Թափոնների կառավարում	Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում;	- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: - Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: - Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն - Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել	Շինարարության կապալառու	Դիլիջանի համայնքապե-տարան Բնապահպա-նության և ընդերքի տեսչական մարմին
Աղմուկի կառավարում	Շին աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճ:	- Աշխատատեղերում աղմուկի մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում: - Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը; - Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին: - Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: - Անհարաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;	Շինարարության կապալառու	Առողջապահա-կան և աշխատանքի տեսչական մարմին
Շինհրապարակի վերականգնում		- Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ ապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն; - Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները; - Մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը; - Մշակված ընդունման-հանձնման ակտի ստուգաթերթիկի բոլոր պահանջները;	Շինարարության կապալառու	Դիլիջանի համայնքապե-տարան

		- Կատարել կանաչապատման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն կանաչապատման նախագծի բարեկարգման պլանների; Ձեռնարկել տնկված ծառերի, թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը՝ բուսականության բարձր կպչողականություն աճն ապահովելու համար		
Շինարարական աշխատանքների իրականացում	Բացասական ազդեցություն կենսաբազնազանության վրա	- Շինարարական հրապարակում բեռնատար մեքենաների ժամանակավոր կայանման համար տարածքների տրամադրում, - շինարարական մեքենա-սարքավորումների տեղաշարժի կազմակերպում շարասյուներով և սահմանափակ արագությամբ (≤30 կմ/ժ), ինչպես նաև մեքենաների իրար հաջորդող տեղաշարժի կազմակերպում՝ առնվազն 30 րոպե պարբերականությամբ, - տրանսպորտային միջոցները ճանապարհներից դուրս երթևեկությունը արգելվում է, - Շինհրապարակում խուսափում՝ շինարարական ու կենցաղային աղբի այրումից և կուտակումից, - Բոլոր աշխատողները պետք է հատուկ հրահանգավորվեն բնական միջավայրերում աշխատելու կանոնների մասին:	Շինարարության կապալառու	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
Շինարարական աշխատանքների իրականացում	Աշխատողների, ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց անվտանգություն	- Մինչև աշխատանքների մեկնարկը մշակել և ԱԻՆ տեղական մարմինների հետ համաձայնեցնել «Արտակարգ իրավիճակներին պատրաստվածության պլան»-ը - Աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար նշանակել պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: - Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. ցանկապատում, պահակակետեր, ցուցանակներ, արգելող պաստառներ այլ: - Ապահովել շինհրապարակում աշխատողների համար հանգստի պայմաններ և կենցաղային պայմաններ /լվացարան, զուգարան/: - Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում:	Շինարարության կապալառու	Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին

		- Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում: - Անձնակազմը պետք է ապահովվի համապատասխան արտահագուստով և անհատական պաշտպանական միջոցներով: - Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել գրանցամատյանում: - Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) - Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը շխատանքներն իրականացնել այնպես, որ նվազագույնի հասցվի ազդեցությունը հարևան բնակիչների և շրջակա տարածքների վրա: - Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ: - Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:		

Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը պետք է լինի նախագծային աշխատանքների արժեքի առնվազն 1,5 - 2%

Մոնիթորինգի /մշտադիտարկումների/ պլան

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	(ո՞վ է իրակա-նացնում մոնիթո-րինգը)
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու Դիլիջանի համայնքապե-տարան
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս Ստեփանավան քաղաքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Պատվիրատու Դիլիջանի համայնքապե-տարան
Հողային աշխատանքներ	- Հանված հողային գրունտները պահեստավորում են թույլատրված վայրում - Անհրաժեշտության դեպքում ետլիցք, ավելցուկի օգտագործում տարածքի բարեկարգման նպատակով	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Պատվիրատու Դիլիջանի համայնքապե-տարան

Շինարարական հրապարակի բարեկարգում	Շինարարական հրապարակի ժամանակավոր պահեստի /բետոնախառնիչի/ ապամոնտաժում, և տեղանքի բարեկարգում - Շինհրապարակի վերջնական մաքրում, տարածքի բարեկարգում և վերականգնում	Շինարարական հրապարակ, ժամանակավոր պահեստներ	Ստուգման գործընթացներ	Շինարարության ավարտական փուլ	Դիլիջանի համայնքապե-տարան
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմը պետք է ապահովվի համապատասխան արտահագուստով և անհատական պաշտպանական միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Դիլիջանի համայնքապե-տարան
Շինհրապարակի վերականգնում, կանաչապատում և տարածքի բարե-Կարգում	- Շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են, - բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են, - շինհրապարակի տարածքը բարեկարգված և կանաչապատված է, ապահովված է ծառերի թփերի և այլ բուսականության նորմալ աճ	Տեղամասեր Կատարած Ստուգայցեր Կանաչապատվող բոլոր տեղամասերը	Շինհրապարակի զննում Ստուգայցեր	Շինարարության ավարտին Շինարարության ավարտից սկսած մինչև ծառերի աճի կպչողականության ապահովումը	Պատվիրատու Դիլիջանի համայնքապե-տարան

Հավելված 1. **Սեփականության վկայականի և կադաստրային քարտեզների պատճենները**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 17 հունվարի 2023 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ԴԻԼԻ ՏՐՈՊԻԿ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Տավուշ, համայնք Դիլիջան Դիլիջան ք. Արցախի փողոց 14 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Առուվաճառքի պայմանագիր 27.04.2022թ. ս/մ 947, Համայնքի ղեկավարի որոշում 03.10.2022թ. թիվ 707-Ա, Առուվաճառքի պայմանագրեր 16.11.2022թ. ս/մ 1232, ս/մ 1233, ս/մ 1234, Համայնքի ղեկավարի որոշում 07.12.2022թ. N 820-Ա, 13.12.2022թ. N 938-Ա, Հողամասն աճուրդով վաճառելու մասին արձանագրություն 14.11.2022թ. N 6, Առուվաճառքի պայմանագիր 22.11.2022թ. ս/մ 3513, Համայնքի ղեկավարի որոշում 10.01.2023թ. N 6-Ա

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 11-003-0614-0044
Մակերեսի չափը (հա)՝ 1.40939
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 17012023-11-0053, գաղտնաբառ՝ PWTTUUY3J6KU

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 1/2

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՀԱՍՄԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 17012023-11-0053, գաղտնաբառ՝ PWTTUUY3J6KU

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի կոմիտե

Տավուշի մարզ

Դիլիջան քաղաք

Հատված կադաստրային քարտեզից

Կադաստրային ծածկագիր՝ 11-003-0614-0044

Մասշտաբ 1: 2 000

Կադաստրի կոմիտե

Հ/հ	Y	X	Հեռավորություններ /մ/
1	8487540.6400	4512494.0900	53.14
2	8487533.4513	4512546.7408	44.93
3	8487532.5577	4512591.6666	76.78
4	8487455.8364	4512588.5452	27.38
5	8487454.0366	4512561.2198	18.09
6	8487462.3725	4512545.1639	11.62
7	8487450.8510	4512543.6600	10.69
8	8487452.7322	4512533.1368	17.24
9	8487448.3338	4512516.4696	32.89
10	8487448.1434	4512483.5846	32.05
11	8487464.2685	4512455.8834	20.20
12	8487467.9722	4512436.0234	4.21
13	8487469.5409	4512432.1113	23.09
14	8487478.1510	4512410.6860	8.92
15	8487486.4798	4512413.8695	11.10
16	8487496.8509	4512417.8225	23.51
17	8487518.8099	4512426.2226	23.47
18	8487540.7315	4512434.5986	7.27
19	8487547.5231	4512437.1936	7.27
20	8487554.3148	4512439.7887	1.93
21	8487556.1200	4512440.4700	27.39
22	8487547.7906	4512466.5656	5.53
23	8487545.1874	4512471.4398	10.35
24	8487543.8173	4512481.6995	12.79
1	8487540.6400	4512494.0900	

սպասարկման գրասենյակ

Հավելված 2. **Նախագծման թույլտվություն**

Ձև N 1-2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ

(մարզի, համայնքի)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N ԱՇ-04 «28» փետրվար 2023թ

Օբյեկտ *ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ*

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

/բարձր ռիսկայնության աստիճան՝ IV կատեգորիա/

(հակիրճ բնորոշումը, հզորությունը)

2 փուլով՝ ՆԱԽԱԳԻԾ և ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ նախագծային փաստաթղթերի մշակման համար:

(ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը *Ք.ԴԻԼԻՋԱՆ, ԱՐՑԱԽԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 14, 11-003-0614-0044*

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող *«ԴԻԼԻ ՏՐՈՊԻԿ» ՍՊԸ, Ք. ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23, 6-ՐԴ ՀԱՐԿ*

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը *ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ՝ ԹԻՎ 17012023-11-0053*

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողատարածքի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթի տվյալներ)

Առաջադրանքի գործողության ժամկետը *Նախագիծը ներկայացնել համաձայնեցման Դիլիջանի համայնքապետարան մինչև 2025 թվականի փետրվարի 28-ը:*

(N 1 հավելվածի 32 րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է *համայնքի բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի կազմում*

(հողամասի դիրքը բազաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը *1.40939 հա*

(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշանարմամբ, մակերեսը (հա))

3. Հողամասի առկա վիճակը *կառուցապատված չէ*

(տեղանքի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (ազգապատմությունը, նշանակությունը, հարկայնությունը, շինությունների նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները *հողամասի տրանսպորտային մուտքը ապահովված է*

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) *Տարածքն ապահովված չէ ինժեներական կոմունիկացիաներով /ջրատար, կոյուղատար, գազատար և էլեկտրամատակարարում/:*

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր *արևելյան կողմից ճանապարհ է, արևմտյան կողմից՝ Ազգային պարկ, մյուս կողմերից՝ այլ անձանց պատկանող հողամասեր*

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) *չկան*

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ *չկան*

(տեղանքում գործող արտաքին, գյուղատնտեսական, գյուղատնտեսությունը, օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ *Նախագիծն իրականացնել 22 բաղաքաշինության գործող նորմատիվ պահանջներին համապատասխան: Կառուցապատողի տեխնիկական առաջադրանքով նախատեսվում է իրականացնել բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցապատում 2 փուլով: 1-ին փուլով նախատեսվում է կառուցել 7 հիմնական մասնաշենքեր և 3-4 հարկանի ավտոկայանատեղի: 1-6 մասնաշենքերը նախատեսվում են որպես հյուրանոցային առանձնահատկություններով: 7-րդ մասնաշենքը հանդիսանում է որպես կապող ֆունկցիոնալ միջանցք և դեկորատիվ տրոպիկական միջավայրով ընդհանուր տարածք: 2-րդ փուլով նախատեսվում է կառուցել Ժամանցի կենտրոն և լողավազան: Նախագծով ներկայացնել արտաքին հարդարման և ձևավորման բոլոր նյութերի տեսակները:*

(Ելնելով 22 օրենադրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, ասվա բաղաքաշինական գրագրային փաստաթղթերի դրությունից կամ դրանց բացակայության դեպքում կազմակերպված (կազմակերպվող) բաղաքաշինական միջավայրի պայմանների, առաջարկությունների, ձևավորման տանիքների, արտաքին գունեղի, պատուհանների հարմարանությունների և գունագեղ լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) *հողամասի սահմանագծով*

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) *պահպանել ինսոլյացիոն և հակահրդեհային նորմերը*

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) *համաձայն էսքիզային նախագծի*

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) *2,4*

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%) *առավելագույնը 80% /ներառյալ բաբեկարգումը/*

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%) *նվազագույնը 20% /ներառյալ բնական լանդշաֆտը/*

9.7. այլ պահանջներ ---

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը ---

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները *չի սահմանափակվում*

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

(*Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ*)

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տար ջրի մատակարարում *կցվում է*

(Համաձայն ժամանակակարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում *կցվում է*

(Համաձայն ժամանակակարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում *կցվում է*

(Համաձայն ժամանակարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադրիրը ---

(Համաձայն N 1 հավելվածի 58 բդ կետի 2-բդ ենթակետով սահմանված էլեկտրական տվյալների)

12.5. թույլ հոսանքներ ---

12.6. աղբահանություն ---

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում *նախատեսել*

(տեղի՝ ՝ կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում *նախատեսել*

(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ջանկոպատում, գոմաղոր և այլն)

15. Շինարարական նյութեր *Արտաքին դիզայնում առաջարկվում է օգտագործել փայտ, բնական ջարդված քարի շարվածք, ապակու և այլն:*

(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին գունեղի, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ *առաջնորդվել օրենքով սահմանված նորմատիվ-տեխնիկական պահանջներով*

(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ *ապահովել ՀՀՇՆ 21-01-2014 Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն նորմերի պահանջները*

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ *ապահովել ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի պահանջները*

19. Շրջակա միջավայրի պահպանում *օրենքով սահմանված կարգով*

(շրջակա միջավայրը վնասակար ազդեցությունից բաղադրելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում *Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրը զերծ պահել շինարդրի կուտակումից: Հողային հանույթներից առաջացած բնահողը կուտակել համայնքապետարանի կողմից առաջադրված տարածքում՝ հետագայում օգտագործելու նպատակով:*

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, բաղաթային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը *մինչև 2025 թվականի փետրվարի 28-ը, Նախագիծ և Աշխատանքային փաստաթղթեր*

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ *Նախագծային փաստաթղթերի փորձաքննությունն իրականացնել ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ սահմանված կարգով:*

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը ներում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում *Նախագիծը ենթակա է համաձայնեցման ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:*

(իրավատու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ Եզրագային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ *Առկա է Դիլիջանի համայնքի ղեկավարին կից հասարակական հիմունքներով մշտապես գործող Դիլիջանի քաղաքաշինական և ներդրումների խրախուսման խորհրդի դրական եզրակացություն:*

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում *Նախագծային փաստաթղթերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության*

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

27. Այլ պայմաններ *Նախագծային փաստաթղթերի համաձայնեցման և շինարարության թույլտվություն ստանալու նպատակով դիմել Դիլիջանի համայնքապետարան մինչև սույն առաջադրանքի գործողության ժամկետի ավարտը:*
Շինարարության ավարտի ժամկետը կնախատեսվի շին.թույլտվությամբ:

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

ՀՈՂԱՍԱՍԻ ԻՐԱԴՐԱԿԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ
Մ 1:2000*
Կցվում է թիվ Ա1-04 նախագծման թույլտվությանը
0035
բնակելի կառուցապատման հողամաս
0037
բնակելի կառուցապատման հողամաս
կառուցապատվող հողամաս
S=1.40939հա
0044
բնակելի կառուցապատման հողամաս
0106
հնարի ոլորտներ «Գրիգորի»
հնարի ոլորտներ «Գրիգորի»
0029
0002
0008
0005
0009
0006
0016
0007
0013
0010
0014
0012
0059
0042
Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Լ. Սանդրոսյան
Բաղկացած է 1 էջից

ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ
Մ 1:5000
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔ, ԱՐՑԱԽԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 14 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ Է ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ՝ «ԴԻԼԻՋՐՈՊԻԿ» ՍՊԸ-ՆԱ
ԻԼԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԴԻՄԱՐԿՆԵՐԻՑ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

1	«ՀԷՑ» ՓԲԸ	
2	«Վեոլիա Ջուր» ՓԲԸ	
3	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ	
4	«Տրանսգազ» ՍՊԸ	
5	«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ	

Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Լ. Սեմերջյան

Բաղկացած է 1 էջից

Հավելված 3. Իրադրության հատակագիծ

Օգտագործված գրականության ցանկ

- ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ., հունիսի 21:
- Շինարարական Կլիմայաբանութուն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. Սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
- ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
- ՀԲ 2015: Բնապահպանական և սոցիալական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- ՀՀ ազգային ատլաս: Երևան, 2007
- ՀՀ կառավարության N 862-Ա որոշում: Անհատույց սեփականության իրավունքով գույք հանձնելու և քանդման (ապամոնտաժման) աշխատանքներ կազմակերպելու մասին: 25 օգոստոս 2016, URL: https://www.e-gov.am/gov-decrees/item/27593/:
- Http://xn--80aajzhcnfck0a.xn--p1ai/publicdocuments/1310049.pdf
- Www.arlis.am
- Www.atdf.am
- https://www.dilijancity.am/
- http://tavush.mtad.am/